• بوزانتيوه •

ارمنيجه يوميه وسياسي غزته در صاحب امتيازی ومدير مسئولی

بوزانت كچيان

مطبعه ومحل مخصوصی باب عالی جاده سنده ۳۸ عددلی

دائره مخصوصه‌ده در

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Տարեկան 7 մէճ., վեցամսեայ 3 ½, եռամսեայ 2։ —Արտասահման 40 ֆր., վեցամսեայ 20, եռամսեայ 10։ Թղթատարի ծախք մեր վրայ, բայց կը [illegible]։

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ՔՍԱՆ ՓԱՐԱ — ՔՍԱՆ ՓԱՐԱ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

Ի դիմաց Թերթին կ'ստորագրէ մի միայն ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆԸ
Առ որ կ'ուղղուին ամէն գրութիւնք

PUZANTION
Journal Arménien Quotidien, Politique, Financier et Littéraire
Directeur-Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab Aali Djaddéssi, No. 38.
CONSTANTINOPLE

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 256 | Կ. ՊՈԼԻՍ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1897 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1/13 | 16 ՌԵՊԻՒԼ ԱԽԸՐ 1315 | 1 ԷՅԼՈՒԼ 1313 | Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 256

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ՎԵՐԱՍԿՍՈՒՄԻ ԱՌԹԻՒ

Մայրաքաղաքիս վարժարաններուն վերաբացումը (որոնց մէջ գրեթէ բացառաբար չպիտի անուանեմ ազգային յատուկ գոյն մէկ վարժարանն մը բացումն) անշուշտ քիչ չաս նորութիւններ պիտի ունենայ, զոր օր՝ դասատուներէն ոմանց տեղափոխութիւնը, նոր դասատուներու երեւումը, մանաւանդ ամէնէն նորն՝ այցելու տեսուչներու պաշտօնական ներկայութիւնը վարժարաններու մէջ։ Այս առիթով երկու առաջարկ ունիմ մեր Ազգ. Հոգաբարձութիւններուն.—Առաջինը՝ վարժարաններու ներքին տեսուչներուն եւ երկրորդը՝ դասագիրքերու մասին։

Այս առաջարկները փափաքելի ըլլալ [illegible] մեր բոլոր Թաղ. Հոգաբարձութիւններուն, ուղղակի մեր վարժարաններու օգուտին համար։ Առաջարկներս կրնան ուրիշ գիտողներն ալ զբաղեցուցած ըլլալ, բայց որովհետեւ անոնք շատ կարեւոր, քան թէ էական կէտեր են (եւ հաւանաբար այս պատճառաւն ալ նորութեան համար չեն գրուած կամ գործադրուած մեր վարժարանաց մէջ,) չուզեցի արձակուրդի միջոցին առաջարկել զանոնք, միամտաբար ենթադրելով որ կրնային չունալ մեր Հոգաբարձութիւններու ուշադրութենէն։ Բայց քանի որ այժմ իւրաքանչիւր Հոգաբարձութիւն վերաբացման առիթով իր վարժարանին համար օգտակար եւ գործնական կարգադրութիւններ կ'ընէ, կ'ենթադրեմ որ առաջարկներս ուշադրութեան կ'արժանանան։

Առաջին.— Տեսուչ. Ազգ. Թաղային վարժարաններու Տեսուչներն ամէն օր իրենց վարժարաններուն մէջ պէտք է ըլլան։ Դիտեցինք որ վարժարան մը յանձնուած է Տեսուչի՝ հազիւ 5-600 ղրշ. ամսականով։ Այս անձը տուն տեղ ունի, ընտանեկան ծախք ունի։ Մէկ կողմէն իր տեսչութեան յանձնուած վարժարանին բոլոր կարգադրութիւններուն պիտի հասնի, միւս կողմէն, որովհետեւ 5-600 ղրշ. ով չի կրնար ապրիլ, պիտի վազէ ուրիշ դպրոցներու մէջ [illegible] պաշտօն վարել, որպէս զի կարող ըլլայ քանի մը հարիւր ղրշ. ալ վաստկելու. Տեսուչն [illegible] ստիպուած է թէ իր անձնուեան յանձնուած վարժարանին երկու օրն անգամ մը այցել եւ թէ չհասնիլ շատ մը կարգադրութիւններու գործադրութեան։ Ասի ուղղակի ծիծաղելի [illegible] կ'ենթադրեն վարժարանները։ Աւելի ծանր, եւ ամէնէն մեծ վնասը, [illegible] վարժարանին ուսանողական համայնքն է որ կ'կրէ։ Որովհետեւ դասատուներ ընդհանրապէս այցելու են, պակասաւոր հսկողութիւնն եւ Տեսչին կարգադրութիւններուն [illegible] կ'մնան միայն հսկողի մը ձեռք։ [illegible] գիտցածնին կ'ընեն։ Մերթ հսկողը տեղի ունեցող անկարգութիւնները նշմարելէ [illegible] չունենար։ Անգին դասատուներն ալ իրենց ուզածնին պէս կ'պաշտօնավարեն եւ կը դասախօսեն, քանի որ Տեսչի բացակայութիւնն հսկողի [illegible] թիւն մ'է վարժարանի համար։

Եւ յետոյ, ծնողք եւ Հոգաբարձութիւն [illegible] կ'գանգատին թէ վարժարանն յառաջ չերթար, ուսանողներ անուս եւ քիչ մ'ալ անկարգ կ'մեծնան, վարժարանի բարեկարգութիւնը խախտած է. այսպէս չըլլար, [illegible], տեսուչը կամ հսկողը փոխելու է եայլն. դանդաղներու եւ գիտողութիւններու անհշտանում չարք մը։ Դժբախտաբար, այս ամէնն երդութիւն է [illegible] ծառը, դարմանը կայ, սակայն, եթէ Հոգաբարձութիւններ ուզեն իրենց վարժարաններու տեսուչները դուրս [illegible] իրենց վարժարանին մէջ փրաղեցնել։ Ամսական փոքրիկ յաւելումն մը պիտի ունենան իրենց [illegible] վրայ։ Որչափ ալ դժուար ըլլայ այս Նիւթապէս, բայց կարելի է գործադրել։ Տեսուչն ամէն օր եւ ամէն վայրկեան իր աչքին առջեւ ունենալով իր դպրոցը, մեծապէս եւ գործնականապէս պիտի արդիւնաւորէ իր տեսչութեան պաշտօնը։ Նիւթապէս ալ օգտակար պիտի ըլլայ, որովհետեւ ժամանակ կ'ունենայ մէկէ աւելի դասեր անձամբ աւանդելու, այս [illegible] դասատուի մը չափ աշխատելու։ Ահա նիւթականն շահն ալ, զոր բաց է [illegible] մը իրաւամբ կը շահի։ Եւ եթէ հոգաբարձութիւնք նոր [illegible] մը ամսականը բարդեն տեսչի ամսականին վրայ, տեսուչ մը կրնայ ամէն օր իր վարժարանին մէջ աշխատիլ, հասնիլ ամէնէն մանր գործին յաւ կարգադրութեան։ Տեսուչի ամենօրեայ ներկայութիւնը վարժարանին մէջ բիւրապատիկ առաւելութիւններ ունի. ասի գործնական միջոց մ'է մեր վարժարաններու բարեկարգութեան.— վարժարաններ որ ամէնէն աւելի այսուհետեւ բարեկարգ պէտք է ըլլան ամէն տեղ։

Բ. Դասագիրք.— Դասագրքերը պէտք է նոյն իսկ վարժարանէն հայթայթել։ Այս դրութիւն շատ մեծ առաւելութիւններ ունի։ Վարժարանի ծրագրին համեմատ դասարաններու մէջ աւանդուելիք դասերն որոշուած են արդէն. ըստ այսմ Հոգաբարձութիւնը կ'գնէ վարժարանին պէտք եղած դասագրքերն եւ ուսանողներ վճարելով կ'ընդունին դասագրքերը։ Այսպէս, ուսանողներուն ձեռք տարբեր դասագիրքեր չեն տեսնուիր (ինչպէս անձամբ դիտած եմ ես), եւ աղքատ ուսանողներ առանց դասագրքի չեն մնար. վարժարանն հոգացած կ'ըլլայ այս շատ կարեւոր պէտքն, այնպէս [illegible] ուսանող իր [illegible] պատրաստ կ'ունենայ իր ձեռք։

Դասագրքերու կանոնաւոր հայթայթումը դպրոցներու յառաջդիմութեան մէջ իրական դեր մ'ունի, զոր գործնական ընել բարիք մը պիտի ըլլայ մեր վարժարաններու համար։ Վարժարաններու [illegible] վրայ աւելորդ բեռ մը չի դներ այս դրութեան գործնականացումն, որովհետեւ բարեկեցիկ ուսանողներ ուղղակի վճարումով պիտի ընդունին դասագրքերն, աղքատներն ձրի։ Իսկ անոնք որ միջակ վիճակ ունին եւ պէտք եղած բոլոր դասագրքերը չեն կրնար գնել, կ'առաջարկենք դասագրքերը վարձքով տալ այդպիսիներուն։ Այնթապի Գոլէճն այս կերպով դասագիրք կ'հայթայթէ ուսանողներուն. առով թէ վարժարանը կ'շահի նիւթապէս եւ թէ ուսանողը չի զրկուիր դասագրքերէ կամ չի նեղուիր։ Թերեւս աղքատներն ալ, որք թոշակ չեն վճարեր, դասագրքերու համար քանի մը փարա տալու [illegible] կ'ըլլան։

Փայլուն անուններով վարժարաններ ունինք քիչ չատ, ու բաւական դրամ կ'ծախսուի, բայց այդ վարժարաններու ներքին կեանքն առողջ չէ։ Առանց հիմնական բարեփոխութիւններ առաջարկելու, այսպէս ենք որ եթէ քիչ մը գործնական ըլլալ սիրենք, եւ բարձի թողի չընենք կարեւոր առաջարկներ, մեր կրթական հաստատութիւններ հիմակուընէ աւելի ծառայած կ'ըլլան իրենց նպատակին, եւ ուսուցիչներու համար խրախուսիչ, ուսանողներու համար շինիչ, աշխատող կրթական մարմիններու պատուաբեր, իսկ ծնողաց համար մխիթարական արդիւնք կրնան տալ։

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԷԿ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանդէսի մէջ Հ. Գ. Մ.՝ գիրք կարդալու եւ գծելու արուեստին վրայ՝ լոյս ընծայեց ու կ'ընծայէ չարք մը յօդուածներ, որք ամէն նոր ուսումնասիրողներու իրական ծառայութիւն մը կրնան մատուցանել միասամբ. [illegible] կանոններով ու չզանցելի օրինակներով փորձառութեանց փունջ մը միշտ իր օգնութը կրնայ ունենալ։ Սակայն ներուի մեզ հմուտ վիրգապետին մէկ քանի դիտողութիւններ ընել գիշանտով ուսումնառնչ. երիտասարդներուն թախանձանքին, եւ իմ անհատական կեանքէն հայաքականդիրեան բաժին մը հանելով։

Ա. Գիտնական ու բաղդատական ուսումնասիրութիւններու մէկ կարեւոր մասն են ծանօթութիւններն. ինչքան ալ բազմաթիւ ըլլան, գերազանցապէս շահեկան են անոնք. եթէ աւելցնեն [illegible] անձերէ. գործել օգտակար թէ իսկ մէջ բերուին նորաւորներէ, վասն զի շատ անգամ անոնցմով կ'տեղեկանանք առաջնակարգ գիտնականներու, որք թերեւս անծանօթ մնային մեզի. մերթ կ'յալաքանունինք ալ աւելի (կ'մոլորինք), մերթ կ'ստիպուինք դիմել ուրիշ հեղինակներու։ Ծանօթութիւնները տեսակ մը մատենախօսական դեր կ'կատարեն. [illegible] ուսումնասիրանք կարդացողներ կը համոզուին բաժին. ուսանողներ կամ ինքնին գրադացողներ երախտապարտ զգացումով կ'յարին իրենց առաջնորդողներուն՝ որ դասատուներ չեն, այլ անմահ մատենագիրներ։ Դժուարութիւն յարուցանելու տեղի չկայ եւ ոչ մեր վար [illegible] ունենալու հարկ. ուշի ուշով մերի հատուածները կարդալէ վերջ, ակնարկ մ'ալ նետել վարի ծանօթութեանց, կարծեմ ո՛րքան յոգնութեան չէ կարօտ, եւ ըստ Ցարգ. յօդուածագրին, միթէ հեղինակներու խորհելու եւ դատելու կերպին փորձաքարը չե՞ն ըլլար անոնք. համեստ պաշարով միտք մը, բաւական է որ տրամաբանել գիտնայ, շատ շուտ կը կռահէ այս պարագան։

Բ. Ծանօթութիւններու չափ օգուտ կ'ընձեռեն մեզի կոչումները, պայմանով որ պատշաճապէս կիրարկուին. այո՛, հոս վերջին պատճառն [illegible] թափանցկոտութիւն եւ ճաշակի նրբութիւն ունենալու է. արուեստագէտին վրձինին միացած գիտունի գրիչն երեւան կ'բերէ անհամեմատ գեղեցիկ արտադրոյթներ։ Այս աղէկ, բայց անհասկնալի կ'թուի մեզ կարգ մը գրողներու տարօրինակ [illegible] միտումը, ինչ ընենք այնքան լաւ պատառիկներ, երբ [illegible] չենք կարող կարդալ զանոնք, ձգէ իմաստն իմանալը։ Իմ անցեալ տարուան յօդուածներումս հարցուցած եմ եւ պիտի հարցնեմ, որքան անլսելի մնամ, թէ Հանդէսն հասկնալու համար հարկաւո՞ր է չորս հինգ լեզու մէկէն սորվիլ. ըստ իս, ո՛չ. եւրոպական մէկ լեզու թէ՛ Պոլսեցի եւ թէ գաւառացի [illegible] ուսանողներու պէտքը կրնայ գոհացնել. ասոնք կը պարծենան թէ գիտական ու գրական ամենազգի տեղեկութիւններ մեր Հանդէսներէն կրնան ստանալ, առանց գիտնալու գերմաներէն, անգլիերէն, մա՛նաւանդ լատիներէն ու յունարէն. ո՜րքան միամիտ են. լեզուագիտական ցուցադրութիւններու առջեւ կ'կարկամին. յաճախ տեսած եմ անոնցմէ շատեր որ թերթը ձեռքերնին առոր անոր կ'դիմեն, ու երբեմն ճարահատ ետ կ'դառնան։ Հանդէսն [illegible] ձեռքէ ձեռք կ'յափշտակուի. խմբագրութիւնը գիտնալու է այս։ [illegible] (ճաշակներու վրայ պէտք չէ խնդիր հանել) եւ ըսեն թէ Հանդէս Բանասիրական թերթ մ'է, եւ ամենուն ո՛չ դիւրամատչելի. ասի անխղճութիւն է, զրկել է բազմաթիւ ընթերցողներ հետաքրքրական նորութիւններէ եւ գրական հայ յոյժի (բարձր դաս) մենաշնորհ ընել է կայն. երբ ամբողջ Եւրոպա կ'ազնի ու կը տասնի գիտութիւններ ռամկացնելու ժողովրդական ուսուցումով մը, մինչեւ ներէն ա՞յս պէտք էր յուսալ. մինչ աչքի առջեւ ունենանք սա ճշմարտութիւնն. «Հեղինակի մը նպատակը գրած ատեն իր տաղանդը ցոյց տալ չէ, այլ ըստ ամենայնի արդիւնաւէտ ըլլալ իր ամէն կարգի ընթերցողներուն». սկզբունք մ'է այս, որ սրտի ալ ծանօթ է։ Որչափ ախորժով պիտի կարդայինք Հանդէսի յօդուածներն երբ հետագայ շնորհումներն ըլլան. 1. Հայերէն տառերով եւ օտար հնչումներով ներկայել արտաքին մատենագրութենէ քաղուած կտորները. 2. Ազնիւ թարգմանութիւնը տալ ծըգեւ. 3. Ծանօթութիւններու մէջ գրքերու խորագիրներն եւս թարգմանել։

Գ. Գալով «օտար լեզուաւ նշանաւոր խօսքեր, իմաստալից առածներ» առաջ բերելուն, միեւնոյն բանը պիտի կրկնենք. միայն ֆրանսերէն գիտցող մը ի՞նչպէս պիտի արտասանէ [illegible] (.՞) [illegible] (.՞) [illegible] եւ պիտի հասկնայ թէ [illegible]։ Ամէն մարդ պարտակա՞ն է [illegible] «[illegible] եւ օտար ասացուածներու բառգիրքն» կամ անոր երկու հատոր գործերը իրեն հետ պտտցնել. անոնց [illegible] թարգմանութիւնն [illegible] բառու քով դնելու արգելքներ կա՞ն։ Այդ թերին թիւրիմացութեանց դուռ կ'բանայ. միջադէպ մը պատմեմ. անգամ մը երիտասարդ ինքնուս մը քով [illegible] հարցուց. «[illegible]» գրամական տուգա՞նք կ'նշանակէ. [illegible] ինքն ալ վերջին կ'ներկայացնէ. [illegible] քաղուած Հանդէս կարդալու [illegible] կ'խղճամ. Իրաւ առաջարկս գեղապաշտներու քիմքին դպչի, սակայն գեղապաշտութիւնը պէտք չէ խղդէ հասկացողութիւնը. գրուածքներու մէջ ալ օտարաբանութի՞ւն. մինչեւ անոնց մէջ սկզբնատպութիւն տեսնուելու էր. [illegible] այս [illegible] է [illegible] միայն. Հայոցի [illegible] բարձուածները ուրիշ հրապոյր ունին։

Շատ չերկարցնեմ. կ'վախնամ որ «Ծաղկաքաղ» սրախօսութեանց տարափ մը կ'թափէ վրաս. մեծ յանդգնութիւն չէ՞. [illegible] միտք մը ըլլալ [illegible] մտքի մը դէմ, պարկեշտ ուսանող մը բարձր գրագէտի մը դէմ. [illegible] կ'տրուի եղեր հեղինակութեան, [illegible] խօսք չունինք. իր [illegible] մէկ [illegible] է արհամարհոտ [illegible] դին. [illegible] համբաւին [illegible] մեծ [illegible] կը [illegible] գեղեցիկ ասացուածներ ալ [illegible] յանուցիր. իր [illegible] «գեղագիտական առաւելութիւններն» են անոնք, մա՛նաւանդ երբ անոնց զուգէ դիմացին համոզելու [illegible] մեզի։

Սակայն կատակը մէկդի, լրջօրէն սկսանք, լուրջ կերպով վերջացնենք. մենք կ'յարգենք զինք ու իրեններ եւ արդարացի խնդրանք մը կ'ընենք. արդեօք չէ՞ կարելի յօդուածներն աւելի եւս դիւրըմբռնելի ընծայել, դարձուածները պայծառօրէն պարզելով. գրուածի մը ներքին արժէքը կ'փնտռուի արտաքին փայլէն աւելի. պարզութի՛ւն, յստակութի՛ւն. թո՛ղ այս ըլլայ գրողներու նշանաբանը. բաղձանքնիս ե՞րբ պիտի իրագործուի։ (*)

ՊԼՈՒՋ

(*).—Այս դիտողութիւնները մեք ալ ըրինք՝ Ծաղկաքաղին մէջ վխտացող անդէպ օտարութիւններու համար։ Բայց լսելի չեղանք։ Հասկցանք որ Հ. Մէնէվիշեան [illegible] այսինքն՝ հմտութիւն ծախելու, ինքզինք լեզուագէտ ցուցնելու։ Կ'ներուի։ Դեռ ա՛յնքան երիտասարդ է։ Բայց Հ. Այտընեան անունն չէր իր երիտասարդութեան։

ՄԱՆ. ԽՄԲ.

ԱԶԳ.-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Յ'ԱՅՆԹԱՊ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի.)

ԱՅՆԹԱՊ, 13/25 Օգս. 97

Դպրոցական նոր շրջանը կ'խոստանայ արդիւնաւոր ըլլալ բաղդատմամբ նախորդին։ Հոփսիմեանց վարժարանի տիկնանց խնամակալութիւնը վերակազմուած եւ նոր եռանդով գործի սկսած է. կ'իմանանք թէ Պոլսէն եկող վարժուհիներու հսկողութեամբ պիտի վերաբանայ իր դպրոցն եւ պիտի վարէ անկախ Հայկանուշեան վարժարանի տեսչութենէն։ Իգական սեռի դաստիարակութեան գործին մէջ նշանակելի քայլ մ'է այս եւ կ'յուսադրէ զմեզ որ Աղջկանց համար տիպար դպրոց մը պիտի կրնանք ունենալ. ջերմապէս կ'խնդակցինք խնամակալութեան եւ կ'մաղթենք յարատեւութիւն ու յաջողութիւն։

Վարդանեան կրթարանի վարչութիւնն ալ կարեւոր որոշում մը տուած է. իր արդէն ունեցած 25ի չափ ձրիավարժներէն զատ պիտի ընդունի 12 չքաւոր տղաք եւ վարժարանի ամբողջ շրջանին տեւողութեամբ պիտի հոգայ անոնց դպրոցի եւ հագուստի վերաբերեալ ծախքերը, անունը միայն թողլով իրենց պարագաներուն վրայ. չքաւոր տղաք խնամելու այս ձեւը թերեւս կրնայ աւելի օգտակար եւ ընդարձակ ըլլալ երբ կրթական միւս հաստատութիւններու մէջ հետեւողներ ունենայ։ Ժողովրդին մանաւանդ միջին կարգի երկու տարիէ ի վեր ցոյց տուած բարեսիրութիւնը վստահութիւն կ'ներշնչէ որ այսպիսի ձեռնարկներու համար դրամը չպիտի պակսի, եթէ գործելու ձեռներեցութիւն ըլլայ։ Առիթը կ'յիշեցնէ մեզ Պոլիս ղրկուելու համար ժամանակին որոշուած հինգ չքաւոր տղաքն, որոնք կ'սպասեն ճանբայ ելլելու եւ այժմ գրեթէ մոռցուող չկայ այդ մասին. Սանասարեանէն ալ երկու չքաւոր տղաք ուզուած էր, այդ ալ կարծեմ բարձի թողի պիտի մնայ։ Այսքան անտարբերութիւն մեր ազգ.-եկեղեցական մարմնոց կողմէ ցաւալի չէ՞։

Հրահանգով ձեռնարկուեցաւ օրինաւորապէս կազմելու նոր թաղական խորհուրդ մը. կ'ակնկալենք յաջող եւ արժանաւոր ընտրութիւն մը։

ՆԱԶԱՐ

ՀԱՐՍՆԻՔՆԵՐՆ ՈՒ ԲԵՐՔԵՐԸ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի.)

ԽՈԶԱՏ, 18/30 Օգոս. 97.

Անգամ մը խօսեցանք մեր այժմեան հարսնիքներու վրայ եւ ցոյց տուինք թէ որչափ չայլութիւններ կ'ըլլան։ Արդի երիտասարդութիւնն ալ ձանձրանալով կարգ մը հարուստներու անկարգութիւններէն եւ խենեչութիւններէն, 50է աւելի ստորագրութեամբ բողոքագիր մատուցին այժմեան ինքնընտիր (1) Քաղ. Ժողովին։ Բարեբախտաբար Ժողովն այս անգամ ի նկատի առաւ այս ամէնէն կարեւոր խնդիրը։ Այս առթիւ նշանտուքի, աղջիկ եւ փեսատեսի, պսակադրութեան եւ այլ հարսանեկան կարգ ու սարքի մասին օրինագիր մը ի գիր առնել սկսած են եւ Ս. եկեղեցւոյ մէջ ի լուր ժողովրդեան հրապարակային պիտի կարդան։ Կը մաղթենք որ այս բանս փութով ընեն, եւ շատ մը երիտասարդներ, որ այս տեսակ մը ամուսնական տագնապէն չէին ամուսնանար, ի մօտոյ իրենց յոյսերը պսակուած տեսնեն։

—Արմտեաց գինն եւ մանաւանդ ցորենն համեմատելով անցեալ տարուան հետ, այս տարի քիչ մը սուղ է եւ տասանորդի տուրքն ալ այս տարի շատ սուղ եւ ախորժակով ծախուեցաւ. մինչդեռ մենք կ'յուսայինք թէ այս տարի աւելի աժան պիտի ըլլայ։ Տասանորդի տուրքի սղութեան պատճառն ոչ անոր համար է որ հունձքն այս տարի անցեալ տարուան կրկինն է, այլ անոր համար է որ դրսէն խնդրանք կայ, եւ Եոզղատ, Փոքր Ասիոյ գաւառներուն մէջ, ամէնէն շատ ցորեն արտածող գաւառներէն մին է։ Ցորենի վաճառականներն այս տարի ուրախ են եւ կ'յուսան թէ իրենց նախորդ տարուան վնասները պիտի կրնան հանել։ Բայց կ'յուսախաբուին. զի դրսէն ո՛րչափ ալ խնդրանք ըլլայ, ցորենի գինն որչափ ալ բարձրանայ այլուր, արժէքն հոս միեւնոյնը պիտի ըլլայ դարձեալ. միայն ուղտապանները, ջորեպաններն եւ էշապանները պիտի շահին. վաճառականներու համար այս աղբիւրէն շահ չկայ։ Ասկէ առաջ մէկ շինիկ ցորենն Ենկիւբիւ կ'փոխադրէին $1\frac{3}{4}$ ղրշ.ի, իսկ այժմ 3 ղրշ.ի. Սամսուն, Մէրսին ալ նոյն համեմատութեամբ բարձրացաւ։ Ուրեմն մենք վախ չունինք որ այս տարի հացն անցեալ տարուընէ աղէկ ուտենք. ցորենը շատ է եւ փոխադրութիւնն հետզհետէ պիտի աճի։ Ամէն վաճառական չի կրնար շինիկը 40 փրնց. ցորենի համար 3-4 ղրշ. տալ [illegible] աւանգիստ ու այլուր փոխադրել։ Հիմակ որ տակաւին նոր բերքը չելաւ եւ փոխադրութեան վարձքն այսչափ սուղցաւ, հապա որչա՜փ եւս պիտի աճի, երբ նորն ելնէ եւ երբ տասանորդի պայմանաժամն հետզհետէ լրանայ եւ վաճառականը ստիպուի ակամայ ծախել, որպէս զի Հանրային Պարտուց Վարչութեան վճարէ։ Կառավարութիւնն հարկաւ միջոց մը կ'մտածէ որ փոխադրութիւնն աւելի աժան, դիւրին եւ շուտ լինի։ Ասկէ Ենկիւբիւ 8, Սամսոն՝ 11-12 եւ Մէրսին՝ 12-13 օրէն կ'փոխադրուի եւ այս ճանապարհի երկարութենէն շատ անգամ ցորենը կը փտտուի։

(1) Օրինաւոր քուէով ընտրուած չեն, այլ իրենք իրենց գլխուն Քաղ. Ժողովոյ աթոռը նստած։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԷՊԼԷՔԷ ԻՆՉՈՒԱՆ ՔԵԱՊՈՒԼ

Քանատայի վարչապետ Սըր Ուիլֆրիտ Լօրիէ բազմատեսակ եւ բազմակողմանի մարդ մ'է։ Հպատակութեամբ անգլիացի է, եւ անգլ. պետութեան բարձրագոյն պաշտօնատարներէն մին, բայց ցեղով Ֆրանսացի է, եւ կ'պաշտէ զՖրանսա։ Գաղափարով, քաղաքականութիւնով ազատական է. բայց կրօնով կաթոլիկ է, եւ որդիական ակնածանքով կ'սիրէ զԼեւոն ԺԳ.։ Ջերմ կուսակից է Քանատայի ինքնօրէնութեան. բայց անգլ. Տէրութեան զանազան մասերուն սերտ միութեան ա՛յնքան ջերմեռանդ է որ գաղթականութեանց մէջ նորութիւն մը մտցուց՝ մայր-հայրենիքին հանդէպ մաքսային բացառապէս նպաստաւոր դրութիւն մը սահմանելով։

Այս վարչապետին Լոնտոնի Յոբելեանի հանդէսներէն Քէպէք եւ Մոնրէալ (Քանատեան երկու ոստանները) դարձը նոյնքան նշանաւոր եղաւ որքան Մ. Ֆէլիքս Ֆօրի Ռուսիայէ դարձն եղաւ Ֆրանսայի համար։ Իր տպաւորութիւններն իմանալու համար թղթակիցներ ընդ առաջ եկած էին իր շոգենաւ, եւ Սըր Ուիլֆրիտ ըսաւ անոնց թէ «Ադամանդեայ Յոբելեանի հանդէսն անմոռանալի տեսարան մ'էր, հրաշալի յայտնութիւն մը Բրիտանեան Տէրութեան զօրութեան ու պերճութեան եւ աչքի զարնող ցոյց մը Վեհ. Թագուհւոյն վայելած ժողովրդականութեան։ Թափօրին ամէն մէկ մանրամասնութիւնն ուշագրաւ էր, բայց ամէնէն աւելի դիտելի, ամէնէն աւելի խորազգեցիկ մասն էր Ս. Պօղոսի մայր-եկեղեցւոյն մէջ գոհաբանական պաշտօնը։ Անգլ. բնաւորութեան մէկ նշանակն եւ անգլ. ազգին համար պատուաբեր հանգամանք մ'էր որ այն փայլուն հանդէսին ամենափայլուն մասը սահմանուած էր ըլլալ հրապարակային գոհաբանութիւն մը Ամենակարողին Աստուծոյ՝ բրիտանեան Տէրութեան վայելած յաջողութեան ու բարօրութեան համար։»

Եթէ Մ. Ֆէլ. Ֆօր Ռուսիայէ բերաւ զինակցութեան դաշնագիր մը, որով Ֆրանսա իր կորուսած տեղը կը վերագտնէ մեծ ազգաց շարքին մէջ, Սըր Ուլ. Լօրիէ Անգլիայէ իրեն հետ բերաւ ուրիշ զոյգ մը պաշտօնագրեր։

որք Թանատային իրրեւ ինքնուրոյն Պետութիւն իրաւունքներ ստացած ըլլալը կ'հաստատեն։ Այն կարեւոր պաշտօնագրերն են երկու ծանուցագրերը զորս Լ. Սալիզպըրի ուղղեց Գերմանիոյ և Պելճիոյ, յայտարարելով թէ առաջիկայ տարին աւարտող առեւտրական դաշնագրերն Անգլիա դադարեալ կը նկատէ, նպաստաւորելու համար իր առեւտրական հաղորդակցութիւնները Թանատայի հետ։ Ուրեմն, Թանատա, վաճառական Անգլիոյ համար, Գերմանիոյ եւ Պելճիոյ համահաւասար դիրքի մը տիրացեր է։ Իրաւ է որ Անգլիա հիմակ այնքան ապրանք չի տար Թանատայի, ո՛չ ալ այնքան բան կ'ընդունի անկէ. բայց Թանատա բարոյապէս և ապագայի տեսութեամբ ո՛րքան նկատելի տարր մէ Մեծին Բրիտանիոյ համար որ սա չի վարանիր դրացի երկու վաճառաշահ երկիրներու հետ իր տնտեսական յարաբերութիւններ վտանգի ենթարկել ի սէր Թանատայի։ Հետեւապէս, Սըր Ու. Լօրիէ ապահով է որ շատ չանցած գաղթականներու մեծ թիւ մը և կարեւոր դրամագլուխներ Թանատայի ճամբան պիտի բռնեն՝ անոր կոյս հողերուն վրայ աշխատելու եւ Անգլիոյ հետ վաճառականութեան շահաբեր նիւթեր պատրաստելու համար։

Իր անձնական տպաւորութիւնները պատմելով, Թանատայի վարչապետն ըսաւ թէ՝ «Այս անգամուան ճամբորդութեանս առթիւ շատ մը նշանաւոր անձնաւորութիւններ տեսայ Լոնտոնի, Բարիզի և Հռոմի մէջ, բայց մանաւանդ երեք անձնաւորութիւններու հետ տեսակցեցայ որոց դէմքերն անջնջելի կերպիւ դրոշմուած են մտքիս մէջ։ Չեմ կրնար ըստ բաւականին արտայայտել այն երեք անձնաւորութեանց իմ վրայ գործած տպաւորութիւնը։ Կ'ակնարկեմ զՎեհ. Վիքդորիա Թագուհին, զՄր. Կլատսդոն և զՆ. Սրբազնութիւն Լեւոն ԺԳ. Պապը։»

Դիւթիչ տեսարան մը կ'ներկայէր Սէնթ Լօրէնս գետն, երբ անկէ վեր կ'ելնէր ազատական վարչապետը՝ Մոնրէալ մտնելու համար։ Գետոյն երկու եզերաց վրայ ուրախութեան մեծամեծ խարոյկներ վառեր և ամէն քաղաքներ, աւաններ, գիւղեր, նոյն իսկ անհամար պարտէզներու ծառեր կանթեղներով լուսավառուեր էին։ Վարչապետը տանող շոգենաւուն կ'հետեւէին բազմաթիւ շոգենաւեր ու շոգեմակոյկներ։ Մոնրէալի քարափները լի էին անհուն բազմութեամբ։ Բեմ մը պատրաստուած էր, ուր առաջնորդուեցաւ Լօրիէ, եւ 30,000 ունկնդրաց բազմութեան մը խօսելով, ըսաւ որ թէպէտ Լոնտոն հինգ միլիոն հոգի կ'պարունակէ, մինչ Մոնրէալի բնակիչք 350,000 հոգի են այժմ, իրեն համար այն դիմաւորութեան ցոյցն յունիս 10/22ի Թափորէն աւելի մեծարժէք է. զի այսօր Թանատայի մէջ կուսակցական խտիր չկայ, անգլիացի թէ ֆրանսացի, կաթոլիկ թէ բողոքական, ազատական թէ պահպանողական, Թանատայի ամէն զաւակներն անխտրաբար ուրախ են Թանատայի մեծ յաջողութեան համար, որ փայլուն ապագայ մը կ'խոստանայ իրեն։

*** Թայմզ իր սեպտեմբեր 3ի թիւին մէջ երկար յօդուած մը ունի «Ապստամբութիւնն ի Հնդկաստան» խորագրով, յորում կը յայտնէ այս կարծիքը թէ «Հնդկաստանի Իսլամներն որք կ'պատկանին Խալիֆայութենէն՝ ժամանակէ մ'ի վեր զայրոյթ կ'զգային կարծելով Անգլիոյ Արմատականներուն Թուրք Տէրութեան դէմ խօսածներն և գրածները։ Ո'րչափ աւելի խստութեամբ կ'խօսէին այս վերջինք, այնքան աւելի աննպաստ տպաւորութիւն մը յառաջ կ'բերէին Հնդկաստանի իսլամական մտքերուն վրայ։ Հնդկաստանի Իսլամներուն հրատարակած անգլ. եւ բնիկ լեզուով թերթերը քանիցս գանգատեցան թէ «Մեր իսլամ զօրքեր անձնուիրապէս և հաւատարմապէս կ'կռուին Բրիտանեան Թագին համար՝ ընդդէմ իսլամ ապստամբաց, բայց կ'վայլէ՞ որ նոյն միջոցին Լոնտոնի մամուլին եւ անգլ. Խորհրդարանին մէջ այնպիսի քննադատութիւններ ըլլան որք իսլամներուն զգացումները չարաչար կ'վիրաւորեն։»

*** Ուսեալ Հնդիկ մը որ այս պահուս Լոնտոն կ'գտնուի, հականգլիական գեղան թերթի մը թղթակցին այս կարծիքն յայտներ է Հնդկաստանի ապստամբական շարժումներուն վրայ.— «Չեմ կարծեր որ բոլոր Հնդկաստան ոտք ելնէ։ Իրաւ է որ Հնդկաստան մինչեւ վերջն Անգլիոյ ձեռքը պիտի չմնայ. բայց դարեր պէտք են որ վերջանայ Մեծին Բրիտանիոյ կրթիչ գործն Հնդկաց մէջ։ Անգլիացիք մեր դաստիարակներն են։ Հնդիկ ժողովուրդը լիովին արժանի է իր ճակատագրին։ Մեր ազգութիւն ախտացած էր մինչեւ իր ոսկրածուծը. բայց երկաթն եւ հուրը պիտի մաքրեն և առողջացնեն զՀնդկաստան։ Սերունդներով պէտք ունինք տակաւին անգլիական վարչութեան՝ մեզ զմեզ բարւոքելու համար։ Եթէ Անգլիացիք այսօր կամովին քաշուէին Հնդկաստանէ, պէտք կ'ըլլար որ ծնրադիր աղաչէինք անոնց չլքանել զմեզ. զի անոնց մեկնումէն ետքը դաւերը կա՛մ ուրիշ օտար Տէրութիւն մ'է, այն է՝ Ռուսիա, և կամ քաոսային անիշխանութիւն։ Այսպէս կ'զգայ իմ ազգակիցներուս մեծամասնութիւնն. անոր համար չեմ կարծեր որ Անգլիոյ դէմ ընդհանուր ապստամբութիւն մը ծագի Հնդկաստանի մէջ։»

*** Կրետէի մասին, ծովակալք, տեսնելով որ նոյն իսկ Սփաքիոյ կատաղի ապստամբք համակերպած են կղզւին նոր կազմակերպութեան, պաշարումը վերուցին, թէպէտ եւրոպական զօրքերն առաջուան ոյժով կ'շարունակեն մնալ և հսկել հանդարտութեան։ Պաշարումն որոշուած էր՝ թող չտալու համար որ Յունաստան զօրք ղրկէ Կրետէ և ապստամբք օգնութիւն ընդունին դուրսէն։ Դեսպանք որոշեր են Հաշտութեան Դաշնագրին ստորագրուելէն անմիջապէս ետքը պատասխանել Բ. Դրան ծանուցագրին, որով պահանջուած է փութացնել օսմ. հպատակ կուսակալի մը անուանումն, որ օգնութեամբ օսմ. զօրաց և յանուն Կայս. Կառավարութեան, վերջնապէս վերահաստատէ խաղաղութիւնն ի Կրետէ։

ԴԷՊՔԵՐՆ Ի ՖՐԱՆՍԱ

Թան կ'ծանուցանէ թէ ներքին գործոց նախարարն որոշած է օտարազգիներուն արգիլել սահմանագլխի գաւառներու մէջ թղթատար աղաւնիներ պահել և վարժեցնել, որ ուրիշ բանի չի կրնար ծառայել՝ բայց եթէ զինուորական գաղտնիքներ դուրս հանելու Ֆրանսայէ, մանաւանդ պատերազմի ժամանակ։ Ստուգուած է որ խիստ շատ օտարազգիներ թղթատար աղաւնիներ կ'պահեն Ֆրանսայի մէջ։

—Մանածի չափազանց արտադրութեան եւ գիներուն մեծաքանակ անկման վրայ, Մօզէլի հովտին և Նորմանտիոյ ֆրանսական բամբակի մանածք որոշեցին ծանուցանել իրենց գործաւորներուն թէ հոկտ. 9էն սկսեալ ամէն շաբթու կէս օր պիտի փակուին գործարանք և օրականք ըստ այնմ պիտի զեղչուին 100ին $8^1/_3$ դրշ։

—Ռուս թղթակից մը կ'գրէ բարիզեան թերթի մը.— Ֆրանքեւռուսը կ'զանազանի Երրեակէն սա կերպիւ որ Գերմանիա, Աւստրիա եւ Իտալիա պարտին օգնել իրարու երբ իրենցմէ մին միանգամայն երկու Տէրութեան կողմէ յարձակում կրէ։ Այսինքն՝ եթէ միայն Ֆրանսա յարձակի Գերմանիոյ վրայ, Աւստրիա և Իտալիա պարտաւոր չեն օգնել Գերմանիոյ. կամ եթէ միայն Ռուսիա յարձակի Աւստրիոյ վրայ, Գերմանիա և Իտալիա պարտաւոր չեն անոր օգնութեան հասնելու։ Իսկ ֆրանքեւռուս զինակցութեան համեմատ, Ռուսիա եւ Ֆրանսա պարտին իրարու օգնութեան հասնիլ երբ իրենցմէ մին ուրիշ Տէրութեան մը կողմէ յարձակում կրէ։

—Պոնաբարդեան Օդորիդէի մէջ Մ. տը Թասանեաք և հանրապետական ԺԹ. Դարի մէջ Մ. տը Լանէսան կը գրեն թէ ֆրանքեւռուս զինակցութեան հիմն այն է որ Ֆրանսա հրաժարած է Ալզաս-Լօռէնին նա տրուելը պահանջելէ։ Ալզաս-Լօռէն առաջին զոհաբերութիւնն է զոր Ֆրանսա կ'ընէ Ռուսիոյ զինակցութիւնը ձեռք բերելու համար։ Իսկ Գերմանիա յարձակելէ արգիլուած չէ Աւստրիոյ և Իտալիոյ հետ իր զինակցութեամբ։ Կարող է Ֆրանսայի վրայ յարձակիլ երբ եւ ուզէ, և ռազմագէտներու կարծիքն է թէ Գերմանիա կարող է վարնել զՖրանսա՝ դեռ ևս Ռուսիա իր զօրքը սահմանաց վրայ համախմբելու ժամանակ չունեցած։ Հետեւապէս, այս երկու թերթեր իրաւունք կուտան անոնց որք կ'պնդեն թէ ֆրանքեւռուս զինակցութիւնն այնքան շահաւոր չէ Ֆրանսայի։—Իսկ Մաթէն կ'գրէ թէ Ֆրանսա այնքան խաղաղասէր է որ 1900ի Ցուցահանդէսը կ'պատրաստէ։ Ռուսիոյ հետ զինակցելով, իր միակ նպատակն է խաղաղութիւնը պահել մինչեւ 1900։—Իսկ անկէ՞ ետքը։ Աստուած միայն գիտէ։

—Հացի խնդիրը կ'շարունակէ Բարիզի մէջ։ Քիլօն 40—45 սանդիմի մէջ կ'ծախուի հոն հասարակ հացը։ Աղքատ ընտանիքներու օգնելու համար, քաղաքային խորհրդին մէջ առաջարկուած էր ձրի հաց բաշխել անոնց։ Կառավարութիւնը չընդունեց ձրի հաց տալու առաջարկն, որ ցոյց մը պիտի ըլլար. բայց արտօնեց որ քաղաքային խորհրդին սնտուկէն առ այժմ 150,000 ֆր., և յառաջիկային մինչեւ 300,000 ֆր. դրամական նպաստ բաշխուի կարօտ ընտանիքներուն։ Արմատական և ընկերվարական լրագիրք մեծ աղմուկ կ'հանեն Բարիզի հացագործի մը այն առաջարկին առթիւ, որ ըսաւ քաղաքային խորհրդին թէ ինք կարող է օրական 5,000 քիլօ հաց եփել եւ յանձնել հինգ սանդիմ միայն տարբերութեամբ հացի և ցորենի գնին մէջ, (այսինքն՝ ցորենի քիլօն քանի սանդիմ է, անկէ 5 սանդիմ միայն աւելի պիտի առնու, ցորենի աղացման եւ հացի պատրաստութեան համար։) Քաղաքային Խորհուրդը սիրով ընդունեց այս առաջարկութիւնը։ Ինքն ալ աղքատներուն պիտի ծախէ նոյն գնով։ «Բանի որ այս բանս կարելի է, ինչո՞ւ միւս փուռերը նոյնը չեն ըներ» կ'հարցուի։—Բայց որովհետեւ Նորթ Պրիթիշ Ընկ.ը Ղալաթիոյ եկեղեցիին 12,000 ոսկւոյ կալուածները ձրիապէս ապահովագրեց, կ'հետեւի՞ թէ կալուածներ ձրի կրնան ապահովագրուիլ։ Յայտնի է թէ Բարիզի փռապանն առիթէն օգուտ կ'քաղէ՝ պատուական ռէքլամ մ'ընելու իր խանութին համար,—կ'ըսեն միւս կողմէ։

—Մ. Ֆէլ. Ֆօռ որոշեց ի ցոյց համակրութեան գնել Ռուսիոյ մէջ իր ստացած նուէրներն, որք 15 խոշոր սնտուկներով հասած են ի Բարիզ։

—Բարիզի դատարանն անցեալ շաբթու հնգամեայ բանտարկութեան դատապարտեց Պօղէ անուն կին մը, որ չարաչար կ'ծեծէր ու կ'տանջէր իր զաւակները։ Ինք ամէն բան ուրացաւ. բայց իր զաւակներ խոստովանեցան, և ստուգութիւնն հաստատեց։ Օր մը, մօր բացակայութեան, ոստիկանութիւնը ներս մտնելով, տեսաւ 10ամեայ Լուիզը, 6ամեայ Ժօրժ և չորս տարեկան Ռընէ, երեք տղաքը սենեկի մը մէջ բանտարկուած, միայն իրենց ձեռքերով, և մանչուն ձեռքերն ալ կապուած։ Իր տխեղծ մարմնոյն վրայ գանակոծութեան նշաններ կային՝ անդամները տեղ տեղ սառած ջեր։ Եղունգներէն մին մատէն կախուած էր, զի մայրը խածած բրցուցած էր։ Աղջիկն ալ պատմեց թէ մայրն ամէն օր իրեն կ'պատուիրէր ծեծել իր փոքրիկ եղբայրն, և եթէ չծեծէր, մայրը կ'պատժէր զինք։ Հայրերնին չպատժուեցաւ, զի մարդն օրն ի բուն կ'աշխատէր, և ցերեկուան եղածներէն տեղեկութիւն չունէր։ (Այս ալ զարմանալի, և ոստիկանութիւն փրար կ'անցնի, եւ հայրը բան չիմանար։) Կինն 1891էն ալ վեց ամիս բանտ պառկած էր նոյն յանցանքով։ Հնգամեայ բանտարկութիւնն ամենածանր պատիժն է այս վայրագութեան համար։

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ.—Թայմզին Կ.Պոլսոյ թղթակիցը կ'կարծէ թէ դեսպանք իրենց կառավարութիւններէն հրահանգ ստացած ըլլան ընդունիլ Լ.Սալզպըրիի նոր առաջարկութիւնները՝ ձեւին մէջ թեթեւ փոփոխութիւններ ընելով։ Դեսպանք հետեւաբար թէեւ փաշայի հաղորդեր են այս առաջարկութիւններն, որք նոր բանակցութեանց առարկայ պիտի ըլլան և օսմ. կառավարութեան ալ ընդունելի երեւցած են։ Առաջարկութեանց գլխաւոր կէտերն հետեւեալներն են.— Յունաստանի Երեսփոխանական ժողովը պիտի հրաւիրուի քուէարկելու օրէնք մը, որով պէտք եղածին չափ հասոյթներ պիտի յատկանան ի վճարումն տոկոսներու նոր փոխառութեան ինչպէս նաեւ երկրին հին փոխառութեանց։ Այդ հասոյթներուն գանձումը պիտի կատարուի միջազգային յանձնաժողովոյ մը հսկողութեամբ։

Կ'ըսուի թէ Գերմանիա ալ գոհ մնացած է այս առաջարկութիւններէն։ Այժմ կ'մնայ կարգադրել տուգանաց հատուցման թուականները։ Դեսպանք մեծ մասամբ կարծիք կ'յայտնեն թէ հաշտութեան նախաշաւիղ պայմանաց մէջ պէտք է այդ թուականները սահմանել։ Անգլիոյ դեսպանն, ընդհակառակը, դժուար կ'գտնէ թուականներ ճշդել՝ միջազգային յանձնաժողովոյ կազմութենէն և նոր փոխառութեան մը բանակցութեանց աւարտելէն առաջ։ Լ.Սալզպըրի կ'առաջարկէ որ նախաշաւիղ պայմանաց ստորագրուելէն 1 ամիս ետք Թեսալիոյ խնդիրը կարգադրուի։ Դեսպանք կ'յուսան այս խնդիրը կարգադրել իրենց Եշ.ի գումարման մէջ։ Այս գումարում անցեալ Եշ. տեղի ունենալու էր, բայց ինչպէս ծանուցին թերթերը, վերջնական որոշման չյանգեցաւ։

ԿՐԵՏԷ.— Կղզւոյն ոստիկան-զինուորք անցեալ Գշ.էն սկսեալ սպաներուն իրաւասութեան ենթարկուեր են։ Այս վերջինք յանձն առեր են անոնց պէտքերն հոգալ՝ մաքսային հասոյթից կէսն փոխարէն ստանալով։

—Սդանդարտի թղթակիցը կ'ըսէ որ հելլէն գործակալք թէեւ Կրետէի արեւմտեան մասին մէջ մեծ գործունէութիւն ցոյց կուտան, սակայն Սփաքիա գաւառին բնակիչք, որք կղզւոյն ամենէն ռազմաշէրներն են, յիշատակագիր մը ղրկելով ծովակալներուն յայտարարեր են թէ կ'ընդունին ինքնավար կազմակերպութիւնը։

Մ. ՀԱՆՈԹՕ Կ.Պոլսոյ և Աթէնքի ֆրանս. դեսպաններուն նոր հրահանգ ղրկեց։ Թէեւ պարունակութիւնն յայտնի չէ, սակայն Ֆրանսայի արտաքին գործոց պաշտօնատունն հաստատապէս կ'յուսայ թէ հաշտութիւնն այս մէկ քանի օրուան մէջ ստորագրուի։ Տուգանաց և հին պարտուց խնդիրն ալ բոլորովին կարգադրուածի պէս կը նկատուի։

—Գործակալութեանց հեռագիր մը կ'ծանուցանէ թէ Կ.Պոլսոյ բանակցութիւնք աւարտածի պէս են և միայն տուգանաց վճարման թուականն որոշելու խնդիրը մնացած է։

—Լոնտոնէ Սեպտ. 11 թուով կ'հեռագրեն թէ Լ. Սալզպըրի և արտաքին գործոց միայուն խորհրդականը մասնաւոր տեսակցութեանց մէջ յայտարարեր են որ հաշտութեան կնքումը բաւական մօտեցած է։

ԻՏԱԼԱՑԻ ծովակալ Թանէվարօ, որ Կրետէէ Իտալիա գնաց, ի Չիվիդա Վէքքիա ծովային նախարարին հետ տեսակցեր և յետոյ Հռոմ գացեր է վարչապետին հետ տեսակցելու։

ՆԵՐԱԹԵՐԱՅԻ մէջ անդորրութիւնը վերահաստատուեցաւ և հոն գտնուող իտալեան զօրաց վրայ 150 հոգի աւելցան Գանտիայի զինուորներէն։ Գանտիայի մէջ միայն անգլ. զինուորք մնացին։

ԱԹԷՆՔԷ լրագիրք կ'ըսեն թէ Հելլէն կառավարութիւնը ցարդ 1,800,000 դրախմի ծախսեր է Թեսալիոյ գաղթականներուն համար. ասոր վրայ եթէ աւելցուի ընդհ. հանգամանքով մէկ է գոյացած 600,000 դրախմին, ծախուց ընդհ. գումարը կ'ըլլայ 2,400,000 դրախմի։

—Արքունական գերդաստանին յատուկ զբօսանաւերէ մին հրամանագրուեցաւ որ մեկնելու պատրաստ գտնուի, կ'կարծուի թէ արքայական գերդաստանի անդամներէ ոմանք ուղեւորութիւն մը պիտի կատարեն։

—Թեսաղոնիկէ Տէքիզինէ գաւառակին մօտ անտառէ մը հրդեհ ծագելով ցարդ 3000 պարտամար տեղի վրայ ծառեր այրեր են և հրդեհն առաջքը դեռ չէ առնուած։

ԱԹԷՆՔԷ կ'գրեն առ Թայմզ թէ Յունաստանի հիւսիսային կողմն ընդհարումներ տեղի ունեցեր են զօրաց և աւազակաց միջեւ։ Պրեբէնի և շրջակայից մէջ շփոթութիւններ պատահեր են, և որովհետեւ բազմաթիւ զինուորք, դասալիք զօրքեր, արձակեալ կամաւորներ և ազատուած բանտարկեալներ կ'թափառին երկրին մէջ, վախցուեր է որ գործը կ'մեծնայ, սակայն այնչափ կարեւոր դէպք մը չէ պատահեր։

ԹՈՐՓԻԼՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ.— Աթէնքէ կ'գրեն Սեպտ. 5 թուով թէ Մ. Բալլի յայտարարեր է որ Թորփիլներու խնդիրն Էսթիայի ըսածին չափ կարեւոր չէ. այս թերթ ըսած էր թէ այնպիսի նիւթեր վերցուած էին որ Թորփիլներն չէին կրնար պայթիլ։ Մ. Բալլի յարեր է թէ այս Թորփիլներ, որք Ֆրանսայէ գնուած են, յանձնուած ատենին պակասութիւն մը չունէին, կարելի է ժամանակ անցնելով մէկ քանին աւրուած ըլլան։ Այսուհանդերձ ծովային պաշտօնատունն հրամայեց քննութիւն կատարել նաւային մթերանոցներուն մէջ։

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՊԱԶԱՐ.— Կայս. Իրատէով Բարեգործական Պազարին զանազան մասանց լուսանկարներն առնուելով մատուցուեցան ի Կայս. Պալատ։

ՎԻԵՆՆԱՅԻ թերթերը կ'ըսեն թէ Կրետէ գտնուող ծովակալք պաշարումն ոչ թէ Սեպտ. 10ին այլ 4/16ին վերցնել առաջարկեր են իրենց կառավարութեանց, թէ այս մասին բանակցութիւնք կ'կատարուին դաշնակիցներու միջեւ և թէ տակաւին վերջնական որոշում չէ տրուած։

ՃԵՎԱՏ ՓԱՇԱ, Րէթիմօ և Հանեա ուղեւորելուն առթիւ այդ տեղերու մէջ ոստիկանութեան աւելի ոյժ պիտի տայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆ.— Վերջին լուրերու նայելով, Աֆղանստանի էմիրին զինուորք ցրուեր են ապստամբները. այս կերպով Ակիմայի մէջ նորէն հաստատ կ'ընծայուի էմիրին անկեղծութեան, որ միշտ կ'յայտարարէ թէ բարեկամական զգացումներ կ'տածէ հնդկական կառավարութեան նկատմամբ։

—Պաշտօնական տեղեկագրերու նայելով Քարաչին քաղաքին մէջ, որ 11,000 բնակիչ ունի, օրական 150 դէպք կ'պատահի ժանտախտէ։

ԱՒՍՏՐԻՈՅ կայսրն Ուր. առտու զինուորական բազմաթիւ հետեւորդներով Դոդիս գնաց մեծ ռազմափորձերուն համար, ուր ներկայ պիտի ըլլայ նաեւ Վիլհէլմ Բ.։ Քաղաքը գեղեցկապէս զարդարուած է։ Ֆրանց Յովսէփ կայսրն երբ Դոդիս ժամանեց եռանդագին ցոյցերով ընդունուեցաւ։ Ռազմափորձերը Շբ. սկսան։

ԻՏԱԼԻՈՅ Թագաւորն ու Թագուհին Ուր. Հոմպուրկէ մեկնեցան սիրալիր կերպիւ հրաժեշտ տալով Գերմանիոյ կայսեր ու կայսրուհւոյն, որք մինչեւ կայարան ուղեկցեցան իրենց հիւրերուն։

—Վիլհէլմ կայսրն Եշ. իր ներկայութեան ընդունեց Իտալիոյ արտաքին գործոց նախարարը։ Ուր. ան իր լուսանկարը ղրկեց Վիսքոնդի Վէնօստա մարքիզին։

—Իտալիոյ մեծ ռազմափորձերն ի Մօտոյ տեղի պիտի ունենան Տիէքէի և Ամիճէի մէջ տեղը։ Զօր. Մորրա տի Լավրիանո պիտի վարէ ռազմափորձերը։ Ումպերդօ Թագաւորն, Աոստի դուքսը, պատերազմական նախարարն, ապայակոյտին պետն և յայլք ներկայ պիտի գտնուին։ Ռազմափորձերը պիտի վերջանան մեծ զօրահանդէսով մը ի ներկայութեան Թագաւորին, Թագուհւոյն և նախարարաց։

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ։—Հոկտ.ին վերին Ստիրիայի (Աւստրիա) մէջ Աւստրիոյ արքունիքն որսորդութիւն մը պիտի կազմակերպէ, որուն պիտի մասնակցին Աւստրիոյ կայսրէն զատ, Գերմանիոյ կայսրը, Սաքսոնիայի Թագաւորն և այլ իշխանք։

ՉԱՐՆ Ի ԼՈՆՏՈՆ.—Բեդերսպուրկէ կ'ծանուցանեն թէ Չարը մտադիր է յառաջիկայ գարնան Լոնտոն երթալու։

ԲԵԴԵՐՍՊՈՒՐԿԻ փրանս. դեսպան Մօնդեպելլօ կոմսն անձնական տկարութեան պատճառաւ պաշտօնէ պիտի քաշուի եղեր։

ՌՈՒՍԻՈՅ կայսրն Նիկողայոս Միխայիլովիչ մեծ դուքսին, պատերազմական նախարար զօր. Վաննովսքիի, Վարշաւայի կուսակալ և հրամանատար զօր. Իմէրէթինսքիի և Վիլնայի զինուորական շրջանակին հրամանատար զօր. Դրոզդիի, գոհունակութիւն յայտնեց թէ ռազմափորձերն սքանչելի կերպով վարուած են, ամբողջութիւնը լաւ վիճակի մէջ կը գտնուի եւ զօրաց ընթացքն ու մարզանքները գոհացուցիչ են։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ.— Բեռլինչէ Զայթունկ, որ կէս-պաշտօնական հանգամանք ունի, կարեւոր յօդուածի մը մէջ կ'ըսէ.— «Անգլիոյ եւ Գերմանիոյ միջեւ պատերազմական թաքուն վիճակ մը կայ, որ կ'վախցուի թէ աւելի ծանրանայ։ Երկուց երկրաց առեւտրական յարաբերութեանց մէջ այժմ եղած թշնամութիւնն Եւրոպայի քաղաքային ու ընկերական յարաբերութեանց վրայ վնասակար և տեւական ազդեցութիւն մը կ'ընէ, որ ճշմարիտ վտանգ մ'է։ Թէեւ Գերմանիոյ և Անգլիոյ միջեւ պատերազմի մը պատահականութիւնը շատ հեռի ըլլայ, սակայն կասկածները կրնան վերջնապէս ատելութիւն յառաջ բերել երկուց երկրաց միջեւ և դժուար կ'ըլլայ բառնալ զայն եթէ շատ հաստատուն արմատ բռնէ»։ Այս յօդուած մինչեւ մէկ աստիճան յուզում յառաջ բերաւ քաղաքական ակմբոց մէջ։

ԿՈՂՈՒԽՈՎՍԿԻ կոմսը Սեպտ. 7/19էն Բեշթա երթալով, Վիլհէլմ կայսեր հոն գտնուած միջոցին ներկայ պիտի ըլլայ։

ՌՈՒՄԱՆԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ.— Տօպրուճայի մէջ յաճախ պուլկար աւազակներ երեւնալուն պատճառաւ, Ռումեն կառավարութիւնը դիւանագիտական դիմումներ ըրաւ ի Սոֆիա։ Ռումանիոյ պատերազմական նախարարն հրամայեց խիստ հսկողութիւն կատարել պուլկար սահմանագլխոյն վրայ։

ՍՏԱՄՊՈՒԼՈՎԻ ԴԱՏԸ.—Սոֆիայէ կ'գրեն թէ Ստամպուլովի սպանիչներուն դատը վերստին պիտի տեսնուի Սեպտ. 6/18ին։

ԲԱՐԻԶԷ կ'հեռագրեն Սեպտ. 10 թուով թէ ռումեն մարտանաւ մը Դանուբի մէջ բռներ ու վար դրեր է ռուս շոգենաւ մը որ զէնք կ'տանէր ի Սերպիա։

ՄԱՍԿԱՆԻ, Թավալիէրա Ռուսդիքանայի հեղինակն, անձնասպանութեան փորձեր է երեք անգամ ատրճանակելով պարպելով. շարժառիթն յայտնի չէ։

ՊԱՌՈՆ ՊԱՑՅ, որուն մայրը Միլոշ Օպրէնովիչի աղջիկներէ մին էր, վերջերս մեռաւ ի Հունգարիա և իր մօրեղբօրմէն՝ Միխայիլ Օպրէնովիչ իշխանէն ժառանգած բոլոր հարստութիւնը կտակեց Օպրէնովիչներու գերդաստանին։ Այս մեծ հարստութիւն տեղի է ըսելու որ շատ յարմար ժամանակին կուգայ Միլան Թագաւորին ձեռքը։

ՃԱՊՈՆԻ ծովային պաշտօնատունն ի Գերմանիա յանձնարարեց խոշոր Թորփիլանաւ մը և ութ փոքր Թորփիլանաւեր։ Մեծը պիտի ունենայ 46 մեթր երկայնութիւն, կրկին անիւ եւ ժամ 28 մղոն արագութիւն։ Փոքրերը 39 մեթր երկայնութիւն և 25 մղոն արագութիւն։

ՄԱՐՈՔ.—Րիֆ Մավրերը, իրենց ձեռքը գտնուած բորթուգալցի ու իտալացի նաւաստիները ազատելու համար, իրրեւ փրկանք կ'պահանջեն բանտարկեալ երեք Րիֆի արձակումն և 3000 ֆր։ Այս երեք Րիֆեր բանտարկուած են Բրօսէէչ Գօրէ նաւուն դէպքին առթիւ։

ԳԵՐՄԱՆԻՈՅ կայսրը Կարմիր Արծիւ պատուանշանի մեծ խաչը նուիրեց Վէնէզուէլայի Հանրապետութեան նախագահ Զօրս Քրէսպոյի։

ՀԱՎԱՅԻ Հանրապետութեան նախագահը ծանուցեր է Մ. Նահանգաց արտաքին գործոց պաշտօնատան թէ Հոնոլուլուի կառավարութիւնն հրաւիրեր է Հավայի Ծերակոյտը յարտաքոյ կարգի նիստ գումարել վաւերացնելու՝ Հավայի կղզիներուն Մ. Նահանգաց կցուելուն դաշնագրութիւնը։

ՈՎԿԻԱՆԻԱ.—Սիտնիյէ կ'հեռագրեն անգլ. լրագրաց թէ Նոր Կուինէի կառավարիչն օգս. 21ին սպաննուեր է բնիկներու կողմէ։

ՀԵՌԱԳՐԵՐ

ՎԻԵՆՆԱ, 11 Սեպտ.— Պաշտօնական օրագիրը կ'ծանուցանէ թէ Երեսփ. Ժողովը պիտի բացուի Սեպտ. 11/23ին։

ՀՈՄՊՈՒՐԿ.— Գերմանիոյ կայսրը գիշերանց Դոդիս ուղեւորեցաւ, ուր Ֆրանց Յոսէֆ կայսեր հետ ներկայ պիտի գտնուի աւստրիական բանակին ռազմափորձերուն։

ՄՕՆՑԱ.— Իտալիոյ Թագաւորն ու Թագուհին արտաքին գործոց նախարարին հետ հոս ժամանեցին։

ՏԱՐՄՇՏԱՏ.—Զրոյց կայ թէ Զարն ու Զարուհին Հոկտ.ին հոս պիտի գան։

ՓԱՐԻԶ.— Սիամի Թագաւորն հոս ժամանեց և երկաթուղւոյ կայանին մէջ ընդունուեցաւ Նախագահին ու նախարարներուն կողմէ։ Եշ. (այսօր) Մ. Ֆօռ և Եշ. ալ Մ. Հանոթօ սեղան պիտի տան ի պատիւ Սիամի Թագաւորին։ Յետոյ Դեսպանական մարմնոյ պիտի ընդունուի, որուն պիտի մասնակցին նաեւ արեւելագիտաց համաժողովոյ անդամք։

—Մ. Ֆօռ այսօր Էլիզէի մէջ ընդունեց արեւելագիտաց համաժողովոյ անդամները։

ԼՈՆՏՈՆ.— Սիմլայէ կ'հեռագրեն առ Թայմզ թէ Աֆղանստանի էմիրը բացարձակապէս որոշեր է կարեւոր տնօրինել՝ ցեղապետներուն գրգռութիւնը կասեցնելու համար։

ՍՈՖԻԱ.— Այս միջոցիս Սոֆիայի մէջ կարմրուկ և ծաղկախտ սաստկապէս ճարակած են. շատ մը մահեր կը պատահին։ Թաղապետութիւնն առողջապահական խիստ միջոցներ ձեռք առաւ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, ինչպէս ծանուցինք, Տր. Բրիգիտ Պէշիքթաշի քարոզիչ Տ. Բաբգէն Վ.ի եւ Թաղ. Խորհրդոյ դիւանին հետ Պէշիքթաշ գնաց, որուն եկեղեցւոյն անուան տօնախմբութիւնն էր։ Ն. Սրբազնութիւն երեկոյեան ժամերգութեանց ներկայ գտնուելէ և «Եկեսցէ»ի աղօթքն ըսելէ յետոյ, հիւրընկալուեցաւ Խորաչեանեան էֆ.ի տունը։ Ս. Պատրիարք Հայրն առաւօտուն հանդիսաւոր պատարագ մատոյց և քարոզ խօսեցաւ, որուն բնաբանն էր Պօղոս Առաքեալի սա խօսքը. «Միջնորդ Աստուծոյ յանձինս, այլ յԱստուածն», Բացատրեց Հաւատքի վսեմութիւնն և իւրաքանչիւր քրիստոնէի համար անոր պէտքը, նոյնպէս քրիստոնէի մը պարտաւորութիւններն հանդէպ եկեղեցւոյ։ Օրհնեց յիշատակն հանգուցեալ Տիկին Մաքրուհի Պալեանի, հիմնադիր Պէշիքթաշի

Մաքրուհեան երկսեռ վարժարանին։ Հանգուցեալ տիկնոջ համար հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ։ Պատարագին սպասաւորեցին Տ. Եղիշէ Ծ. Վ. Դուրեան, Տ. Բարգէն Վ. և Տ. Սմբատ Վ.։ Եկեղեցւոյն մէջ թէ՛ թաղեցի և թէ ուրիշ թաղերէ հոծ բազմութիւն կար։ Ցաւարտ եկեղեցւոյ Ն. Ամենապատուութեան առաջնորդութեամբ գերեզման Սորապեանեան Գարապետ էֆ.ի տունն, ուր միջօրէի աչն ըրաւ։

—Երէկ Կէտիկ-Փաշայի եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ Թաղ. Խորհրդոյն ընտրութեան համեմատական քուէարկութիւնն, և ընտրուեցան Տեարք Գէորգ Աբրահամեան՝ 378 քուէ. Մարտիրոս Էքսէրճեան 290. Կոֆապետ Այվեան 234. Խաչիկ Մանկասեան 227. Գալուստ Տէյիրմէնճեան 213։ Քուէարկութեան մասնակցեցան 426 հոգի, որոց 96ն անձամբ, 330ը նամակաւ։ Անցեալ շաբթու արդէն ընտրուած էին քուէից բացարձակ առաւելութեամբ՝ Տքք. Աղեքսանդր պէյ Արապեան եւ Գալուստ էֆ. Եէկէնեան։

—Գատըգիւղի Թաղ. Խորհուրդն հանգուցեալ Գըլըճեան Գէորգ էֆ.ի ատենապետութեան օրով, 1894 դեկտ.ի սկիզբէն, Ս. Թագաւոր եկեղեցւոյ մէջ չըջագծեալ պնակները վերցուած և փոխարէն ամեն գլուխ մէյմէկ ճեպէր սահմանած էր։ Սոյն նշւէրներն արգէլ նուաքերելու համար, գիւղի նորընտիր Թաղ. Խորհուրդն օժանդակ մասնախումբ մը կազմած է, որոյ գիւմբն անդամներն են, Լեւոն էֆ. Արեւեան Ատենապետ, Լեւոն էֆ. Գալայեան Ատենադպիր, Միքայէլ էֆ. Արիստակէսեան Գանձապետ, և երեք անդամք՝ Միհրան Ճապեան, Երուանդ Տուտեան, Վրթանէս Թագւորեան էֆ.ք՝ Հաշուեմակալ։ Կ'յուսացուի որ Գատըգիւղի ազգայինք պիտի փութան մասնակցիլ սոյն նուիրատուութեան, և օժանդակ մասնախմբին ջանքերը պսակել։

—Կ'լսենք թէ Գատըգիւղի Արամեան երկսեռ վարժարանաց Նոխնակալ Հոգաբարձութիւնը դեռ գործի չձեռնարկած, հրաժարած է ինչ ինչ անհամաձայնութեանց պատճառաւ։

—Ուսումն. Խորհրդոյ անօրէնութեամբ Օր. Նւիրիմէ Օտեան Գատըգիւղի Արամեան աղջկանց վարժարանին ընդհանուր դաստիարակուհի կարգուած է, ինչպէս նաև Օր. Ռեպեգա Մավակոլեան նոյն վարժարանի մեծ յոյն ուսուցչուհի որոշուած է։

—Բերայի աղջկանց Արուեստանոցն ի մօտոյ պիտի բացուի։

—Պոլսոյ կողմի վարժարանաց կրթական նորընտիր տեսուչ Պարգեւ էֆ. Մարկոսեան իր պաշտօնին ձեռնարկած է։ Գում-Գափուի դպրի Թաղ. Խորհրդին հրաւիրմամբ իր առաջին այցելութիւնը տուաւ քիչ՝ նախ Թաղի Պէզճեան և Վառվառեան վարժարաններուն։ Տեսուչ էֆ.ն Գում-Գափուի դպրի վարժարանին պիտոյքին և կրթական ծրագրի մասին ինչ ինչ կարեւոր ծանօթութիւններ քաղելէ վերջ, պատշաճ հրահանգները տուաւ և նոյն վարժարանին դասատուներէն Սարգսեան էֆ.ին արժան դատած է պատասխանատու տեսուչ կարգել։

—Երէկ Ֆէրիգիւղի Ս. Վ. եկեղեցւոյն Տ. Գէորգ քհնյ. Անանեան պատարագ մատոյց եւ պաշտօն կատարեց ի հանգիստ հոգւոյ հանգուցեալ գրագէտ Ցակոբ Պարոնեանի։

—Կ'լսենք թէ Ղալաթիոյ քարոզիչ Տ. Եղնիկ Վ. Գալբաքճեան նոյն պաշտօնով Ենիգաբուի եկեղեցին կ'երթայ։

—Ազգային ծանօթ գրագէտ եւ հրապարակագիր Եղիա էֆ. Տէմիրճիպաշեան, որ բժշկաց խորհրդով օդափոխութեան համար Հէյպէլիատա ղեւարած էր, տեղական կլիմային անյարմարութեան պատճառաւ մինչեւ գացեր և հանգստացեր է այժմ։

Թաշճեան ընտանիքը խորին շնորհակալութիւն կ'յայտնէ ամէն անոնց որ հաճեցան ներկայ գտնուիլ իրենց հանգուցեալ մօր ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ԹԱՇՃԵԱՆԻ յուղարկաւորութեան եւ իրենց ցաւակցութիւնն յայտնեցին այս տխուր առթիւ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՈԼԷԺ, տնօրէնութիւն Մ. Ֆօռէ, ի Ֆրէրեան փողոցի թիվ 2-4, Ռուսիոյ դեսպանատան ետեւը։ Հայ ազգը դասական՝ ուսուցման յաւելցեալ այս հրաշալի մէջ կարող են յառաջ տանիլ ֆրանսերէնի, հայերէնի և թուրքերէնի լիակատար ուսումը։ Ֆրանսական հիմնագիրը կատարելապէս յար և նման է Ֆրանսայի Լիսէներու հիմնագրոյն։ Հաստատութիւնը կ'ընդունի գիշերօթիկներ, կէսգիշերօթիկներ և ցերեկեայ աշակերտներ։ Արձանագրութիւնք, սկսեալ Օգս. 29էն (Սեպտ. 10) ամէն օր, առաւօտեան ժամ 10էն մինչեւ երեկոյեան ժամ 4։ Դասերը կ'սկսին Սեպտ. 8/20ին։
20—5

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Բէյայի Ա. աստիճան տրուեցաւ առեւտրական Բ. դատարանին անդամ Աքիֆ պէյի։

—Պելկրատի Օսմ. դեսպանատան Ա. քարտուղար անուանեցաւ Նիշի օսմ. հիւպատոս Հանրի պէյ, որուն յաջորդեց Քրակուեւեվացի օսմ. հիւպատոս Մուսթաֆա Ասըմ պէյ, և ասոր ալ յաջորդեց Պելկրատի օսմ. դեսպանատան Ա. քարտուղար Նամըգ պէյ։

—Բ. կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Պալաթի զօրաբաժնին հրամատար Քեացիմ փաշայի, Ֆէսի ու կերպասի կայս. գործարանաց տնօրէն Մուհիտտին փաշայի, Տրապիզոնի ոստիկան-զինուորաց հրամատար Սիւլէյման փաշայի։ Բ. կարգի Օսմանիյէ՝ Եանեայի եւ Հանեայի ռուս հիւպատոսներուն։

—Հելլենական պատերազմի շքադրամ՝ ոստիկանութեան նախարար Շէֆիգ պէյի։

—Իմթիյազի ոսկի շքադրամ՝ հեծելազօրաց մարզիչ Պրոքտորով փաշայի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՄՈՒՆՔ

«Հապէշստանի Նէկիւս կայսրը «Սալոմոնի Կնիք» պատուանշանի Ա. աստիճանը տուաւ արքունեաց հրամատար Ղազի Օսման փաշայի. արարողապետ Մունիր փաշայի, կայս. Պալատի Ա. քարտուղար Թահսին պէյի, սենեկապետ Ճեմիլ պէյի։ Խարիճիյէի արարողապետ Իպրահիմ պէյի, օգնական Ղալիպ պէյի և կայս. Թիկնապահ Ահմէտ Ալի փաշայի՝ Բ. աստիճանը՝ Խարիճիյէի արարողապետի օգնականներէն Ապտիւրրէզագ պէյի և Գ. աստիճանը՝ կայս. Թիկնապահ տեղակալ Իզզէտ պէյի։ Կայս. Իրատէ մը արտօնեց այս պատուանշաններու գործածութիւնը։»

ՀԵՐՔՈՒՄ.—Թ. Հագիգաթի մէջ կը կարդանք. — «Պաշտօնապէս և բացարձակապէս հերքուած է Լոնտոնի մէկ քանի թերթերու կողմէ տարածուած այն բամբասանք թէ Մուշի մէջ կարգ մը հայ ընտանիքներ բռնադատուած ըլլան կրօնափոխութեան։»

ՀԱՅՔ Ի ՌՈՒՄԱՆԻԱ.— Մոնիթէօռ հետեւեալը կ'արտատպէ Պուքրէշի Տծիւրդալէս լրագրէն.— «Արտաքին գործոց պաշտօնատան պահանջմամբ, ներքին գործոց նախարար Մ. Ֆէրէքիտի գաղտնի հրահանգներ ղրկեց սահմանագլխոյ գաւառաց կառավարիչներուն, յանձնարարելով խիստ հսկողութիւն կատարել Ռումանիա մտնող անձանց վրայ և արգիլել, որչափ կարելի էր՝ Հայոց մուտքը։ Սակայն կառավարիչք պարտին իւրաքանչիւր պարագայի համար մասնաւոր հրահանգ ուզել։ Դալով այն Հայերուն, որք արդէն Ռումանիոյ կ'գտնուին, կառավարիչք հրաւիրուած են անոնց վրայ ուշադրութեամբ հսկելու, մանաւանդ Ռումէնիայէ դուրս գտնուող անձերու հետ անոնց ունեցած յարաբերութեանց վրայ։»

ԴԱՐԴԱՆԵԼԷ կ'գրեն թէ բարձրագոյն նշանները բաղկացեալ յանձնախումբ մը, զինուորական քննիչ յանձնաժողովոյ անդամ Ասաֆ փաշայի հետ անցեալ հինգշաբթի օրը Քիլիտ-Պահր երթալով, Նամազկեահ ու Համիտիյէ կոչուած ամրութիւնները քննեց։ Դարդանէլի բոլոր ամրութիւնք և Հասանատ Թոփխանի գիծերն ի մօտոյ թնդանօթաձգութեան և Թորփիլի յոյժ կարեւոր փորձեր պիտի կատարեն շարժուն նշանակէտներու դէմ։ Արքունի Թնդանօթարանէն գնդապետ Համտի պէյ, Զաթալճայի Թնդանօթաձիգ զօրաց դեր-գնդապետ Հաֆըզ-Իպրահիմ պէյ, Ասաֆ փաշա եւ ուրիշ սպաներ այս մտօք Դարդանէլ գացեր են։

ՏՈՒԱԽՈՏԻ ՌԷԺԻՆ.— Կ. Պոլսէ կը գրեն առ Նայէ Ֆրայէ Բրէսէ թէ օսմ. ծխախոտի Ռէժիի հասոյթը մինչեւ անցեալ Փետր. 28 կարեւոր պակաս մը ունեցած է։ Մաքսախոտի վաճառումն, որ նախորդ տարին 2,224,000 ոսկի արտադրած էր, վերջին տարին 1,953,000 ոսկի բերած է։ Մաքսոյ կողմը կարեւոր խնայողութիւններ կարելի եղած չըլլալով, հարկ տեղիքներ է զեղչել շահաբաժինն, որ նախորդ տարին 19 ֆր. էր և այժմ 16 և կարելի է 15 ֆր. պիտի ըլլայ։

—Այտընի կուսակալն ընդարձակ տեղեկագիր մը ղրկեց նահանգին մէջ Ռէժիի կացութեան վրայ եւ այս տեղեկագիր յանձնուեցաւ Պետական Խորհրդին։

ՊԱՐՍԿԱԿԱՆ դեսպան Միրզա Մահմուտ խան շաբաթ օրը Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Մեծ-Եպարքոսին հետ։

Պ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ, երբեմն Վանայ և այժմ Դամասկոսի ռուսական հիւպատոսն որ արձակուրդով Ռուսիա գացած էր, մայրաքաղաքս եկած ու Բերա Օթէլ Գոնթինանթալ իջած է։ 10 օրէն վերջ իր պաշտօնատեղին պիտի մեկնի։

ՏԵՂԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐ.— Առեւտրական Նախարարութիւնը, Թուրքիոյ բնիկ արհեստներուն զարգացման զիրկ մը տալու համար, ձեռնարկած է պատրաստել անոնց մէկ վիճակագրութիւնն, և այս մտօք հրահանգ ղրկած է բոլոր գաւառական իշխանութեանց, որպէս զի տեղեկագրեն թէ ի՛նչ տեսակ բնիկ արհեստներ կան և ի՛նչ միջոցներով կ'կարդան զարգանալու համար։ Նոյնպէս Կ. Պոլսոյ Առեւտրական Սենեակին հրահանգ տրուած է տեղեկագրելու թէ այժմ Պոլսոյ մէջ շոգիով, ջրով, հովով ու ձեռքով բանող ո՛րքան մեքենաներ կան՝ կերպաս գործելու, արմտիք աղալու, օղի թորելու, օճառ, ապակեղէն, չինելու և կաշեղէն խաղախելու համար, և ո՛րքան է անոնց տարեկան արտադրութիւնն, և անոնց ներկայ վիճակին վրայ քննութիւն կատարելով ստուգելու թէ անոնց զարգացումն ի՛նչ միջոցներու կ'կարօտի։ Առեւտրական Սենեակը ձեռնարկած է այս կարեւոր վիճակագրութիւնը պատրաստելու, որով թերեւս լրագիրք կ'յուսան թէ Թուրքիոյ ժողովուրդն ի մօտոյ օտար արտադրութեանց դիմելու կարօտութենէն պիտի ազատի և ներքին բնիկ արհեստները պիտի զարգանան ձեռք առնուած միջոցներով և ընծայուած դիւրութիւններով։

ՌՈՒՍԱԿԱՆ նախորդ դեսպան Մ. Նէլիտովի ի պատիւ, Բերայի Սէրքլ-տ'Օրիանի բոլոր անդամք շաբթու մէջ կոչունք մը պիտի տան, Ն. Վսեմութեան մեկնման առթիւ։

ԻԶՄԻՐԷ կ'գրեն թէ Օգոստոս ամսոյ մէջ Իզմիրի Նաւահանգիստէն Եւրոպա ղրկուած գարիին քանակութիւնն եղած է 16,802 թոնօ և բակլայինն՝ 3280 թոնօ։

ԹԷՆՊԷՔԻՐԻ ՌԷԺիին Կ. Պոլսոյ տնօրէն կարգուեցաւ Սեդրաք էֆ. Գաբաճեան։

ԿՏԱԿ ՄԸ.—Պերլինի օսմ. նախկին դեսպան հանգուցեալ Եանքօ պէյ Արիստարքի իր հարստութիւնը կտակած էր Ցոյն Եկեղեցւոյ երաժշտութեան զարգացման։ Արդ, Լոգոֆէդ պէյ Արիստարքի, որ հանգուցելոյն եղբօրորդին է, կտակագրոյն ջնջումը պահանջեր է։

ՌՈՒՇՉՈՒԿԼԸՆԻ օսմ. նորընտիր դեսպան Րիֆաթ պէյ այս շաբթու իր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։ Նախորդը՝ Մուսթաֆա պէյ քանի օրէն Ռուշչուկլընէ ճամբայ պիտի ելնէ Կ. Պոլիս դառնալու։

ՕՍՄ. ՊԱՆՔԱՅԻՆ ընդհ. տնօրէն Սըր Էտկար Վինսընթ անցեալ Բշ.է ի վեր Պերլին կ'գտնուի, բայց յայտնի չէ թէ անկից ե'րբ պիտի մեկնի։

ԵԳԻՊՏՈՍԻ մէջ բամպակի բերքը 5,900,000 կանդինար եղած է, որ տասը տարի առաջուանին կրկինն է և 1896էն ալ մէկ միլիոն աւելի։

—Աղեքսանդրիոյ մօտ Եպուքիրի ագարակին մէջ Եպուքիր ընկերութեան տնօրէնն ու ծխավարն սպանուեր են բնիկներու կողմէ։ Շարժառիթը գողութիւն կ'կարծուի։

ԽՈԶԱԿԻ ՄՐՑՈՒՄ.— Իզմիրի մէջ ձեռնարկուած խոզակի մրցման պարգեւաբաշխութեան հանդէսն անցեալ Դշ. օրը մեծ շքով կատարուեր է կառավարական պաշտօնատան ընդարձակ դահլիճին մէջ ի ներկայութեան կուսակալին, բարձրագոյն պաշտօնատարաց եւ Պրուսայի չերամաբուծական վարժարանին տնօրէն Թորգոմեան էֆ.ի։ Մրցանակի արժանի հանդիսացող 15 չերամաբոյծներ մանրադէտներ ու դրամական պարգեւներ ստացեր են։ Ասոնց մէջ կան երկու Հայ, Թէքէքէօյէ Ցովհաննէս Խօլէէեան և Խօաէմիշէ Տիկին Հռիփսիմէ։ Թորգոմեան էֆ. շաբաթ իրիկուն մայրաքաղաքս վերադարձաւ։

ԻԶՄԻՐԻ նաւահանգիստը գտնուող օսմ. նաւատորմին հրամատար Հասան Խայրի փաշա անցեալ օր նոյն նաւահանգիստը գտնուող անգլ. Սէպէլ մարտանաւն այցելեր է, եւ վերադարձին թնդանօթով ողջուներ է անգլ. մարտանաւին կողմէ։

ՍԿԻՒՊԻ քրիստոնեայ ժողովուրդը, կ'ըսէ Իգտամ, Պատրիարքարանի դիմելով խնդրեր են որ իրենց մետրապոլիտ մը կարգուի։ Սկիւպի մետրապոլիտութիւնը թէեւ դեռ Տ. Ամբրոսիոսի վրայ կ'մնայ, բայց Սերպերը չեն ուզեր անոր Սկիւպ վերադառնալը։ Սերպ կառավարութիւնը խնդրեր է որ Տ. Ամբրոսիոսի փոխանորդ կարգուի Պելկրատի մետրապոլիտ Տ. Միխայիլի ազգական Տ. Ֆիրմիլիանոս, որ ժամանակէ մը ի վեր Կ. Պոլիս կ'գտնուի։ Ֆէնէրի Սինոդը մեծամասնութեամբ կարծիք յայտներ է որ օտար կառավարութեան մը միջամտութեան տեղի չտրուի, որով Տ. Ֆիրմիլիանոսի անուանումը դժուարութեանց հանդիպած է։

ԱՆԱՏՕԼՈՒԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ.— Վիեննական թերթ մը հաստատելով թէ Թուրքիա ծը ըստ օրէ կ'յառաջդիմէ ու կ'բարգաւաճի, կ'ծանուցանէ թէ կառավարութիւնն որոշեր է ըստ կարի շուտով մինչեւ Սվազ ու Երզնկա երկարել Անատոլուի երկաթուղւոյ գիծն որմէ Անատոլուի ներքին նահանգները մեծապէս պիտի օգտուին։

ՀԱՊԷՇԱՅԱՆ պատգամաւորութիւնն երէկ մայրաքաղաքէս մեկնեցաւ Օտեսա, ուսկից Բեղերսպուրկ պիտի երթայ։

ՍԻՐԳԻՈՑ Ալեքսանդր Թագաւորին անուան տօնախմբութեանն առթիւ, երէկ Թարապիոյ յունաց եկեղեցւոյն մէջ գոհաբանական աղօթքներ կարդացուեցան ի ներկայութեան դեսպանին և այլոց։ Մ. Վլատան Եորկէվիչ ներկայից շնորհաւորութիւններն ընդունեց և յետոյ շնորհաւորական հեռագիր ուղղեց Ալեքսանդր Թագաւորին։

ԴԱՏԱԿԱՆ նախարարութիւնն 1311 տարւոյ դատական ընդհ. գործառնութեանց մէկ վիճակագրութիւնը պիտի հրատարակէ։

ՊԵՏԱԿԱՆ Խորհուրդը կ'խորհրդակցի առաջարկութեան մը վրայ թէ թէնքէի մաքսանենգներու նկատմամբ ալ ի գործ դրուելին ծխախոտի մաքսանենգներուն յատուկ օրինական գործողութիւնները։

ՍԵԼԱՆԻԿԻ մէջ երկու տարիէ ի վեր հաստատեալ Քոմէրշիըլ Քոմբանի փոնուն առեւտրական ընկերութեան դէմ, կ'ըսէ Մալիմադ, այս օրերս հակառակական զրոյցներ կ'շրջին։

ՄԱՔՍԱՑԻՆ վերատեսուչը ծրագիր մը մատուցանելով, առաջարկեց Բ. Դրան որ մաքսատուրք մասին փոփոխութիւններ ըլլան։ Այս ծրագիր յանձնուեցաւ քաղաքային պաշտօնէից յանձնաժողովին։

ՃԱՐՊԻԿ ԳՈՂՈՆԱԹԱՓՈՑ ՄԸ.— Թուրք լրագիրք կ'ծանուցանեն թէ Պէրկամայի գաւառին Գանակ գիւղաքաղաքին մէջ, այս օրերս ձերբակալուեր է Ալի անուն մարդ մը որոյ դէմ ժողովուրդն հանրագրով կ'գանգատէր թէ կարգ մը չարագործներու գողոնաթաքոյց էր և թէ տեսակ տեսակ չարագործութիւններ կ'նիւթէր, որոց մէջ յիշուած է ուղտերու գողութիւն մը իբրեւ իր շահատակութեանց ամենէն զարմանալին։ Նոյն գիւղաքաղաքին տօնավաճառի հրապարակին մէջ, պանդոկի մը պառոց գտնուած ին ուղտ կերպով մը կ'անյայտացնէ։ Ուղտ ուղտապանն իր անասուններուն գոյգուիլը տեսնելով, ձիով զանոնք փնտռելու կ'նկէ։ Ճամբան Ալիի կ'հանդիպի, որ ուղտերն իր ընկերոջ յանձնելէ յետոյ կ'վերադառնար։ Ալի իբր թէ ուղտերը փնտռելու գացած ձեւանալով, անոնց ուղղութիւն մը ցոյց կուտայ ուղտապանին ըսելով.«Դուն այն կողմը փնտռէ և ձիդ ինծ տուր որ ես ալ այս կողմը փնտռեմ», և խեղճ ուղտապանն ձին ալ չորթելով, ուղտերուն ետեւէն կ'հասնի ու աներեւոյթ կ'ըլլայ։ Սակայն տեղական իշխանութիւնք կ'յաջողին ձերբակալել չարագործն ուղտերուն հետ՝ որ իրենց տիրոջ անժառանգ մեռած ըլլալուն համար կառավարութեան մնացեր են հիմա։ Ալի էֆ. հիմա բանտին մէջ իր շահատակութեանց վրայ կ'որոճայ և կ'սպասէ իր դէմ տրուած պատիժը քաւելու։

ԱՐԿԱԾ.—Երէկ առաւօտ Լիսթըր անուն նաւաձիգ շոգենաւ մը, Նիկոմիդիա երթալու համար ճամբայ ելած պահուն, Սիրքեճիի առջեւ նաւակի մը զարնուելով ջախջախեց զայն։ Նաւավարն ու մէջը գտնուողներն ազատեցան։

—Արքունի Ֆէսխանէին մէջ, Թուրք գործաւորուհի մը թեւն երէկ առաւօտ մեքենայի մը ակռաներուն կառչելով, փրցուեցաւ։ Վիրաւորն հիւանդանոց փոխադրուեցաւ։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐԵՐ

ԲԱՐԻԶ, 12 Սեպտ. — Ծովային պաշտօնատան հրամանաւ կատարուած քննութեամբ հաստատուեցաւ որ Պրէ-Իէօ մարտանաւուն արկածն առաջ եկած է մեքենայէն մէկ մխոցին (բիսթոն) ճեղքուելով կոտրելէն։ Պրէ-Իէօ այս պատճառաւ չկրցաւ Նախագահին հետեւիլ ի Ռուսիա։

ԴՈԴԻՍ.— Գերմանիոյ կայսրն այսօր Դոդիս կ'սպասուի, ուր մեծ պատրաստութիւնք եղած են ընդունելու։ Ռազմափորձերէն յետոյ Գերմանիոյ և Աւստրիոյ կայսերք որսորդութեան պիտի երթան ի Մոհէշ՝ Ֆրէտէրիք արքիդուքսին դղեակը։

ՏՈՔԹՈՐ Մ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՎԿԱՅԵԱԼ ԱՄԵՐԻԿԵԱՆ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ
Հաստատեալ յամին 1852
Նորահնար գործիքի մը միջոցաւ ամենաաստիկ ցաւած ակռաները, մէկ անգամէն վայրկենապէս կը լեցնեն, ցաւով դիմել եւ բուժուած վերադառնալ։ Կատարելագործեալ եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական ակռաներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դէնթէ յէ—ա—որա—ըլի—ն (ըստ տարիքի), ծամող—ըլի—ն, եւ այլ պատռ—ո—ըլի—ն հրաշխաւորեալ։ «Սկոռբիթ» կոչուած բերնի հիւանդութիւնը, երեք այցելութեամբ կատարելապէս կը բուժեն, ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու, եւ նորահնար աքցաններու միջոցաւ առանց ցաւի ատամնահանութիւն։
Թիւ 396 Մեծ-Փողոց Բերա (Խ...ի գարեջրատան վրայի յարկը ճիշդ Ջէզայիրլեանց դէմ)։
Գատըգիւղի յաճախորդք կրնան դիմել նաեւ իրենց բնակարանը Թիւ 1 Նոր բացուած Խըլիօվէլի փողոց ամէն օր։
Յ. Գ. — Հաւասարելու համար Եւրոպայի եւ Ամերիկայի առաջին կարգի ատամնաբոյժներու, ձմեռները կիրակի օրերն ալ, ինչպէս նաեւ մինչեւ էս գիշեր հիւանդ կ'ընդունին Բերայի գործատեղինին։

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Խնամակալութիւնս կ'ծանուցանէ թէ Կեդր. վարժարանը յառաջիկայ Սեպ. 1ին վերաբանալ որոշած ըլլալով հանդերձ, յարմար դատած է աշակերտաց ընդունելութեան պայմանաժամն բաւական կերպով երկարաձգել մինչ Սեպ. 10ս։ Ուստի աշակերտել փափաքողք պարտին դիմել ամէն օր Կեդր. վարժարան և անունին արձանագրել տալ՝ Սեպ. 10.Դշ օրը մուտք քննութիւն անցունելու համար։

Ի դիմաց Խնամակալ. Կեդր. Վրժն.ի
Ատենադպիր Վ. Ատենապետ
Յ. Մոռքոթեան Մուսթաս Հօրէնց
Ղալաթիա, 26 Օգս. 97։ 3—2

ԶԳՈՅՑ.—Օրիորդ մը, քաջահմուտ ձեւելու և կարելու արուեստին, որ նաեւ մի քանի տարի ազգ. վարժարանաց մէջ ուսուցչութեան պաշտօն վարած է, կ'փափաքի մայրաքաղաքիս մէջ պատուաւոր հայ ընտանիքի մը տուն միայուն կերպիւ պաշտօն ստանձնել, այնպէս որ պաւակներուն ուսման և գիտութեանց նախատարրերը դասաւանդէ, կանացի արտաքին հագուստները ձեւէ ու կարէ, նոյնպէս և ձերմակեղէնները, ձեռագիտութիւնն ուսուցանէ դասերաց, վերջապէս միայուն գործոն անդամ մ'ըլլայ։ Լաւ յանձնարարութիւններ կրնայ բերել։ Դիմել Ղալաթիա Նիւզէքէ Գալըպըըմ Թիւ 67. իսկ նամակաւ՝ առ Օր. Զ. ուսուցչուհի (նոյն տեղ։) Ցօժարողներէ կ'խնդրուի փութով յայտնել իրենց կամքը. զի կ'սպասուի մինչեւ Սեպտ. 1 միայն։ Ամսաթոշակ դիւրամատչելի։
3—2

ՔՈՆԵԱՔԻ ՄԵԾ ՋՏԱՐԱՆ
Շ. Կ. ՊՈԼԱՆԱՔԻ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ (ԵԳԻՊՏՈՍ)
Հիմնեալ 1884
Բարիզի քաղաքապետութեան քիմիական աշխատանոցը՝ տնօրէնութեամբ Բաազէօրի վաւերացուցած է առողջապահական յատկութիւններն և ախորժելի համը։ Ի Լոնտոն պաշտօնական ցուցակներուն մէջ անցած է իբրեւ Զօռժ Խաղող Քոնեաք։ 1894ին Եգիպտոսի ազգ. արուեստահանդէսին մէջ ի ցոյց դրուած քոնեաքներէն միայն այս քոնեաք ոսկի շքադրամ ստացաւ։
Ներկայացուցիչ Թուրքիոյ, Պուլկարիոյ, Սերպիոյ և Ռումանիոյ.
6—50 ՖՐԻՏ ՖԷՐԲԷՐ
Պէօյիւք Թիֆքրէք խան Պոլիս, Թիւ 3

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱԻ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսաի Շահանէճէ միւլքայէտ օլունաճագ գուրու ֆասուլեա վէ սաղօն վէ զէյթին եաղընըն միւնագասալարընա պազարլըղընտան, իժայի թալիպ օլանլարըն՝ Խազինէի ճէլիլէի միւշաբիլէհ՝ յայա կէլմէլէրի իլան օլունուր։
28 աղոսթ. 313 3—1

* * *

Խազինէի Խասսաի Շահանէճէ միւլքայէտ օլունաճագ չուգա վէ ապա վէ ելլիւնէլլիք քէթէն վէ մա փիւսքիւլ փէս միւնագասասընա պազարլըղընտան իժալիպ օլանլարըն ճուվանըն ղայրը կիւնիշերէ վէ մաառնըօլ վէ ամէրիգան վէ սալաշ պուլըն տախի սէնէի հալըրէ իւյըլընըն 3իւնճիւ չարշանպիհ կիւնիւ զարարը գաթիւի վիրիլէճէկինտէն էվվէլ մէզքիւրաթէ իժասըն արզու իտէնլէրին Խազինէի միւշաբիլէհ՝ յայա միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։ 3—1
31 աղոսթ. 313

ՍԵՂԱՆԱԽՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ		
ՓԱԿՈՒՄ		
Օսմ. քոնսոլիտէ Սէրի Դ. Օ. Ո.	24	17½
Ամենէն բարձր գին »	24	17½
Ամենէն վար գին »	24	15
Ռումէլիի երկաթ. գծ. ֆրց	118	—
Ամենէն բարձր գին	118	—
Ամենէն վար գին	117	37
ԲԱՑՈՒՄ, 1 Սեպտեմբեր		
Օսմ. Քոնս. Սէրի Դ. Օ. Ո.	24	14
Ռումէլիի երկաթուղի ֆր.	117	50
Օսմանիյէ »	—	—
Ռէժի »	—	—
Օսմ. Պանքա »	15	25
Քաղաք ժէնէրալ օթթօմ. »	7	07
Երկրագործական Պանքա »	9	—
Սեր. Օթ. Տանժ է Վալ. Ա. Ո.	3	15
Օսմ. Ապահ. ընկեր. »	4	15
Թրամուէյ բաժնեթ.	685	—
» Ժուլիաւնա	230	—
Թրամուէյ պարտաթ. ֆր.	496	—
Տէրքօսի ջուրի ընկ. »	332	50
Քարափ Կ. Պոլսոյ »	466	—
ՍԹԻԼԱՆՑ		
Քոնսոլիտէ ութ օրուան Օ. Ո.	312	½
» մէկ ամսուան »	—	—
Ռումէլ. երկ. ութ օրուան »	—	—
» մէկ ամսուան »	—	—
ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ		
20 ֆրանքնոց ղրշ.	87	09
Անգլիական ոսկի »	109	39
Բոլ Էմբէրիալ »	89	20
Քրիմից »	51	10
Մէճիտիյէ արծաթ »	107	25
Ռուպլի Թղթադրամ Օ. Ո.	8	58
ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ		
Լոնտոն 3 ամիս ղրշ.	109	—
Փարիզ 3 » ֆր.	23	10
Ֆիորին ման. »	10	92½
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ		
ԼՈՆՏՈՆ, 11 Սեպտ.		
Օսմ. քոնսոլիտէ Սէրի Ա. Ա. Ո.	66	—
» » » Բ. »	42	—
» » » Գ. »	24	63
» Դ.) բաց. »	22	87
) գոց. »	22	75
Փոխառութիւն Դաւապա Գ. Կ.	80	50
» Օսմ. 3½% »	99	—
Օսմ. Կայս. Պանքա »	14	31
Այտընի երկաթուղի »	16	56
Եգիպտական Միացեալ »	107	37
Անգլ. քոնսոլիտէ Գ. Կ. »	111	56
Հելլենական 5% »	31	50
Մոնոպոլ հելլենական 4% »	36	50
Ռանթ » 4% »	27	—
Պուլկ. փոխառ. 6% 1888 »	95	50
» Նոր » 6% 1892 »	95	—
Փոխան. Փարիզի վրայ »	25	26¼
Դրամագեղչ »	2	—
ՎԻԵՆՆԱ, 11 Սեպտ.		
Փոխան. Փարիզի վրայ ֆիոր.	47	57
» Լոնտոնի վրայ »	119	90
Ռումէլիի երկաթուղի »	65	10
Օսմ. Ռէժի »	161	—
ՓԱՐԻԶ, 11 Սեպտ.		
Օսմ. քոնս. Սէրի Դ.) բաց. ֆր.	23	—
) գոց. »	22	92
» » » Բ. »	42	05
» » » Գ. »	—	—
Օսմանիէ »	—	—
Ռումէլիի երկաթուղի »	119	50
Օսմ. Ռէժի »	343	—
Օսմ. Կայս. Պանքա »	607	—
Ֆրանս. Ռանթ 3% »	104	30
Քաղաք Լիոնէ »	791	—
Պանք տը Բարի »	866	—
Սուէզի բաժնեթուղթ »	3251	—
Իտալական Ռանթ »	94	30
Սպանիական արտաքին »	62	15
Չէք Լոնտոնի վրայ »	25	200
Դրամագեղչ »	2	—
ՊԵՐԼԻՆ, 11 Սեպտ.		
Օսմ. փոխառութիւն 1888 մաքս.	94	50
Ռումէլիի երկաթուղի »	120	—
Անատ. երկ. պարտաթղթ. »	92	—
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս. »	20	270

ՀՐԴԵՀԻ եւ ԿԵՆԱՑ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԵՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000 000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 12,433,000
ՀԱՍՈՅԹ 1895 ՏԱՐԻՈՅ 3,161,300

ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 4,671,100
ՀԱՍՈՅԹ 1894 ՏԱՐՒՈՅ 1,245,300

Ընկերութիւնս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովութիւններ ի գործ կը դնէ չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել. նաև երբ ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուժած վնասին 20,000,000 Անգլ. Ոսկին կ'անցնի.

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՄԱՐԻԹԱՅՄ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 5,000,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 100,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և գրամածրարները խիստ օգտակար պայմանաւ. Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուղղակի կը դրուէլ ... Մէհմէտ Ալի փաշա խան գետնայարկ Թիւ 22 և 22 կը. սենեակներն, առ ԳԱԲՐԻԷԼ Ց. ՄԵՐԱԲԵԱՆ Գործակալ ի Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ Կ. ՊՈԼՍՈՅ

ԱՐՄՏԻՔ. — Ցորեն. — Վերջացող շաբթուն ժամանեցին 39,200 քիլէ ցորեն կախուց որուն 2200ը Ռումէլի եւ 37,000 զանազան տեսակ Անատոլու. Վաճառուեցան 39,200 Անատոլու 20-22 ղրշ. էն. Կարծր ցորենին համար ու ծախուեցաւ 4,000 Անատոլու և Ռումէլի Եւրոպայի համար օխան 39-41 փարայէն. — Եւրոպայի համար 100,000 ծխու Սեւ ծով ծախուեցաւ օխան 21 փարայէն. Իզմիրի մէջ կ'արժէ 34-36 փարայ. Գարի. — Տեղական սպառման համար 6,000 քիլէ Անատոլու ծախուեցաւ $9^{1}/_{4}$ $9^{1}/_{2}$ էն. Հրապարակին ոգեւորեալ է. Իզմիրի մէջ կ'արժէ քիլէն 9-$16^{1}/_{2}$ ղշ., ըստ տեսակին. Վարսակ. — Խնդրանք կայ. 20 թոնօ ծախուեցաւ օխան $22^{1}/_{2}$-23 փարայէն. Մարսիլիա մէջ Պանտրմայի եւ Ռոտոսդոյի գինն է 15 և Սամսոն 13.50. Իզմիրի մէջ նոր հունձքը գնող կայ օխան 24 25 փր. էն. Մէճիտիէին $20^{1}/_{2}$ ղրուշի հաշուով. Թուղնաիլ. — 200 պարկ ծախուեցաւ 30 փր. էն. Մարսիլիայի մէջ Ռոտոսդոյի տեսակի գինն է 19. Իզմիրի մէջ $31^{1}/_{2}$.

ԱԼԻՒՐ. — Վերջացող շաբթուն ժամանեցին ու ծախուեցան 8,770 պարկ, որոց 3000ն Օտեսա 110-120 ղրշ. էն պարկը, 1000 Սամսոն 75-80էն, 3000 Իպրաիլ 104-112էն, 600 Մարսիլիա և 670 Վառնա 100էն.

ԳԱՂԹԱԲԵՐՔ. — Շաքար. — Ժամանեցին 3000 պարկ Թրիէսթէ. 3000 Թրիէսթէ ծախուեցաւ 81-83 ղրուշէն. Թահին. — Ժամանեցին 2300 պարկ. ծախուեցան 2300. Հրապարակը տկար է. Կ'արժէ պարկը 5.60-$7^{1}/_{2}$ օսմ. ոսկի. Բրինձ. — Ժամանեցին 400 պարկ եգիպտական և 6000 Ռանկունի. Ծախուեցան 400 եգիպտական 75-78էն եւ 5000 Ռանկուն 125էն. Սէպերեան կորեկ. — Թակարգի վրայ գործ եղաւ $9^{7}/_{8}$-$10^{1}/_{4}$ ղշ. էն. Մոմ. 500 Արաբկիր ու Փուլ... ծախուեցաւ $42^{1}/_{2}$-$43^{1}/_{2}$ ղրշ. էն տկարը. Օսմանյէի գինն է տկարը 45 ղրուշ և Պաֆրը $3^{3}/_{4}$ ղր. Բամբակ. — Անտալիը $21^{1}/_{2}$ ղշ., ոսկին 100 ղրշ. էն.

ՄԵՏԱՂ. — Երկաթ. — 100 թոնօ ժամանեց. Շատ գործ չեղաւ. Մետաղի միւս տեսակներուն վրայ նշանակութեան արժանի գործ չեղաւ.

ԱՂԻՆ. — Ծախուեցան 54 տակառ Ուլստոֆքա և ռումանական, 39-40 և 46.47 օխան մէկ օսմ. ոսկւոյ.

ՀԱՆՔԱՅՈՒԽ. — Կարեւոր վաճառում եւ ժամանում չեղաւ.

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ. — Հրապարակի վրայ շատ գործ չկար. գիներն հաստատուն էին. Մանածի, մարմաշի, կտաւի և ապածոյի վրայ քիչ շատ գործեր եղան.

ԱՐՏԱԾԵԼԻ ՆԻՒԹԵՐ. — Թիֆթիկ. — 1100 հակ ծախուեցաւ օխան $17^{1}/_{2}$-18 ղր. էն. Բուրդ. — Նոր բերքերը ժամանեցին, բայց վաճառում չեղաւ. Բամպակ. — Ժամանում եւ վաճառում չկայ. Մետաքս. — Շաբթուս գործ չեղաւ. Ի Լիոն Պրուսայի բժժական մետաքսի (կոշժ) գինն է 36-$39^{1}/_{2}$ ֆր. Սուրիա 36-39 և Պրուսայի կրկնոլը մետաքսի (Օրկանսին) 41 և Սուրիա 42. Կոզալերը. — Մինչ ժամանում կայ բայց վաճառում չըլլար. Աֆիոն. 60 սնտուկ լաւ տեսակ Զիլէ եւ Հաճիքէոյ ծախուեցաւ 127-132էն. Իզմիրի մէջ նոր բերքին գինն է 62-68. Դաղ խէժ. — 7 սնտուկ ապիտակ ... ծախուեցաւ օխան 23-ղրուշէն. Նոր բերքէն 2 ամիսէն կ'ժամանէ. Պաստառ կայ 1700 պարկ Մահմութիէ. — Օխան 60-200 ղրշ. Մոմ. — Օխան $12^{1}/_{2}$-$15^{1}/_{2}$ ղրշ. Դեղին մեղրամոմ. — 19-$19^{1}/_{4}$ ղրշ. Դեղին ճէճիլէ. — Օխան 1.$37^{1}/_{2}$-3 ղր. Գաւառ. — Օխան 5-$5^{1}/_{2}$ ղր. Մորթ. — 6-14 ղր. Ընկոյզ. — Օխան 40-45 փր. Կաղին. — Կոնդրկայ 67-74 ղրշ. Խոզկոտին. — Կոնդրկայ 30-60 ղրշ. Պղպեղ. — Գործ չեղաւ. Նուշ. — 5-$5^{1}/_{2}$ ղրշ. Զաֆրան. — Օխան 20 փր. էն $4^{1}/_{2}$ ղրշ. Բուռդ. — $1^{1}/_{2}$-$3^{1}/_{4}$ ղրշ. ... Մածուկ. — Օխան 22-45 ղրշ.

ԼՕԳՈՒՄԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ԱԼԱՄԵԱՆԻ

Էսկի Զապթիէի դէմ Նօ. 57

Սարգիս Ալամեան կ'շինէ տաճկական Լօգումի ամէն տեսակները մեծ յաջողութեամբ, և համեմատաբար աւելի աժան կ'ծախէ. Դիմողները շատ գոհ կ'մնան և տուփերով զայն ղրկելու համար յանձնարարութիւններ ալ կ'ընեն. Փնտղաշով, կաղինով, եւն. Լօգումի տեսակներէն զատ, նուշով մանուսր անուշեղէն մ'ալ յօրինած է, որ մեծ ընդունելութիւն գտած է. Բ. Դրան հրապարակին մօտ կեդրոնական դիրք մ'ունի իր գործանոց. 6—4

ՕՍՄԱՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՄԵՆԱԴԻՒՐԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Հեղինակ. Պետրոս Էֆ. Կարապետեան Անդամ Դիւանի Պետական Արհրդոյ, ուսուցիչ Օսմ. լեզուի և Տեսչութեան անդամ Պերպերեան Վարժարանի

1. Ամէլի վէ Նազարի Ուսուլը Ղըրաթ. Արէպի 5
2. Ուսուլ վէ Միւնթէխապաթը Զէպանը Ֆարիսի 4
3. Նիւմունէէի Էտէպիյաթը Օսմանիյէ վէ մալիւ.թը Ֆէննիէ 4
4. Բէհնիւմայի Դըրամաթ վէ Թէրճէմէ Բ. Տարի 2
5. Բէհնիւմայի Դըրամաթ վէ Թէրճէմէ Ա. Տարի 1 20
6. Բէհնիւմայի Դըրամաթ Ա. Տարի (ձեռագիր) 1 20
7. Իւավէլի Սարֆը Օսմանի (տեսական և գործնական) 5
8. Մուխթէխապաթ Իւզճերիւտ (հաքծոյ. լրագ. գրուածոց) 3
9. Նէվմէսթէ (ձեռագիր նմուշակներ) 3
10. Նոր Բերան. Օսմ. լեզուի (ձեռագրով հանդերձ) 1
11. Մէշք Խաթտ Իւսէ Օսմանիյէ (ինչ տկար) Օսմ. գեղագրութեան տետր 0 20
12. Իւսուփ Իմլա Խախոս Տօղրու Խաղմէ Ուսուլը 3
13. Թարիխ վէ Նիւմունէյէ Էտէպիյաթը Օսմանիյէ (Պատմութիւն Օսմ. Մատենագրութեան) որ մաս առ մաս պիտի հրատարակուի Ա. Թեկ տետրը 1

Վերոյիշեալ գրքերն ամէն գրավաճառաց քով կ'գտնուին, նամանաւանդ Պալէնց Գրատունը. Մեծ քանակութեամբ գնողներ ուղղակի պէտք է դիմեն հեղինակին. 8—12



ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվերփուլ և Միջերկրականի միջեւ բանող շոգենաւեր

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Ամասիս	3500	Թիգրօ	2500
Ռամսէս	3500	Մարէօթիս	2500
Մէնֆիս	3500	Նէոքիա	2500
Անիւպիս	3000	Բերսա	2250
Ապոլլո	3000	Օսիրիս	2250
Անոփիս	3000	Սֆինքս	2000
Օսմանլի	3550	Կասքօնի	1500
Ֆարոս	2750	Կթէն	1500

Մարէօթիս շոգենաւը, նաւ. Պրաուն, Սեպտ. ի 5ին Լիվերպուլէն հոս կ'սպասուի ընդհանուր վաճառքով.

Դիմել առ Ժ. Վ. ՈՒԻԹՕԼ և ԸՆԿ. Ուիթօլ խան

ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ. 34, Ճէյմս Սդրիդ Լիվերպուլ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ–ՈՅԺ–ԿՈՐՈՎ

ՖՈՍՖՈՏԻՆ ՏՔԹ. ԼԱԼՈՐԻ. — Վերջին 25 տարուան մէջ ապացուցուած է թէ այս ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ՄԻԱԿ ԴԱՐՄԱՆՆ է ցաւը գտնուած, կատարելապէս բուժելը ուղեղի հիւանդութիւններն, անդամալուծութիւն, քնատութիւն, զառանցանքն, անկական կարողութեան վաղահաս կորուստ, եւ ոյժերու կորուստէն յառաջ եկած ամէն գիծ ... խանգարումներ. Կը բուժէ դժուարամարսութիւն, ջղային եւ սրտի, լեարդի եւ երիկամանց հիւանդութիւնները, արեան չըլլալը խանգարումներ, հիւծութիւնն եւ սպառումը. կը կանգնէ ոյժերու կորուստն որ յառաջ եկած է ... սոր հետեւանաց մէջ այս դեղին ազդուութիւնն անմիջական եւ հաստատ է. ... կ'անհետանան հրաշալի արագութեամբ մը. ՏՔԹ. ԼԱԼՈՐԻ ՖՈՍՖՈՏԻՆԸ ջղային հիւթ կը ... կը կենդանացնէ մարդկային զրութեան մէջ ... Dr. Lalor's Phosphodyne London England վրան փորագրուած. ... Մեծ եւ փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ներկայացուցչին քով, Մ. ԽՏՄԱՐԵՏ ՖԱՐՈՒԽԱՆԱ, Անգլ. Ընդհանուր մթերանոց, Վալիտէ պանտմասիներին քով, Կալաթա—Թէրզիի Թրամվէյներու ... րանը Թիւ 95 եւ 97.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Պատուելի հասարակութեան ծանուցանեմ որ ամէն ... մինչեւ կէսօր կը գտնուի նախկին ... Մանր ... ամէն օրէն ... Ազդ. Բժշկական ... մինչեւ Թիւ 200 ... ակռայի վիրաբուժական ամէն գործողութիւնք ի հարկին թմրեցուցիչ դեղերով. Նոր գրութեամբ կը պատրաստէ ակռան եւ դէմքի յարմար առանց ... և առանց զսպանակի և արմատներու վրայ առանց քիմքի, պատուական արհեստական ամէն ձեւ ակռայ. Դիմողք գոհ պիտի մնան գիներու չափաւորութենէն եւ գործողութեանց կատարելութենէն. Գը. խորհրդակցութիւն ձրի. 42—53

Հրատարակուելու համար յղուած կամ նամակ ղրկողներէ կ'խնդրենք որ թղթին միայն մէկ երեսին վրայ գրեն. Երկու երեսի վրայ գրուելէն շատ յապաղում և դժուարութիւն կ'ծագին.



ՖՐԵՏ. ԼԷՅԼԱՆՏ ԵՒ ԸՆԿ.

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվերփուլի և Սեւ-ծովու միջեւ բանող շոգենաւեր

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Վիքթորիան	10500	Փլավիան	3500
Ամալֆիան	10500	Էճիբշեան	3500
Բէծպրիան	10500	Բերժիեն	3000
Լանքասդրիան	9000	Ալճէրիան	2500
Ֆլորենթինա	9000	Արապիան	3500
Գօլխմպիան	8000	Նպէնիան	2500
Ծերֆիան	8000	Անատոլիան	2500
Պոստոնիան	8000	Ալպէնիան	2500
Թիլբրինիան	8000	Լեսպիան	2000
Ֆալէրնիան	3700	Մինշիա	800
Վալիանթ	3700	Օրոթաւա	800
Պալմիրան	3700	Լիւպօն	800
Ֆապիան	3500		

Ապրանքի տէրերէն կ'խնդրուի իրենց ապրանքն այլուր փոխադրելու կամ Ղալաթիոյ մաքսատունէն հանելու համար իրենց հրահանգը ղրկել շոգենաւուն ժամանումէն 24 ժամ առաջ.

Աւելի տեղեկութեանց համար դիմել առ ԷՏՎԱՐ ԼԱՖՕՆՏԻՆ

Մէհմէտ Ալի փաշա խան, Թիւ 1 Ղալաթիա

ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼ. 200 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆՔ

Հաշուեկշիռ ի 31 Յուլիս 1897

ԳՈՅՔ

	Ֆր.
Պատրաստ դրամ սնտուկին և պանքաներուն մէջ	110,968,869.03
Առեւտր. Թուղթեր	634,734,583.11
Ոբրոն	161,063,481.16
Ընթացիկ հաշիւք	310,783,773.67
Երաշխաւորութեամբ փոխատուութիւնք	111,364,518.32
Թանձնթուղթ, մուրհակ, պարտաթուղթ և պետական արժէթուղթ	11,488,793.94
Աճուրդի կալուած	30,000,000
Զանազան հաշիւներ	18,335,627.28
	1,388,739,646.51

ՊԱՐՏՔ

Աւանդ դրամ և ի տես մուրհակ	440,163,399.71
Ընթացիկ հաշիւք	483,545,042.49
Ընդունուած փոխանակագիր	119,465,561.27
Պայմանաժամով վճարելի	57,530,888.33
Զանազան հաշիւներ	48,034,754.71
Պահեստ	40,000,000
Դրամագլուխ	200,000,000
	1,338,739,646.51

Ճիւղագործակալութիւն յար և նմանք Նիֆք. Վարչութեան Ընդհ. Տնօրէն ՀԱՆՐԻ ԺԵՐՄԷՆ Ատենապետ



ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԲԵԱՆ

Ն. ԲԱԲԷ եւ ԸՆԿ.

Պոլսոյ և Պաթումի միջեւ բանող

Ա. կարգ 245 ֆրանք

Բ. » 175 »

Ուղեւորի և ապրանքի փոխադրութեան, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատար ԹԻՄՈԹԷ ՐԸՊՈՒԼ

Մուհենդիս օղլու Թ. 1

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

ԻՏԳԱՐԱՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ», ՕՐԱԳՐՈՑ Կ. Պոլիս, Նօ 38, Պապը Ալի ճատտէսի

ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի (75)

ԺՕՐԺ ՕՆԷ

ԿԵՆԱՑ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ

ՏՈՒԲԴՈՐ ՌԱՄՕ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

—Շատ մի ուրախանար, ըսաւ. Թերեւս քեզ համար աւելի աղէկ էր որ անհետանայի... Արդէն շատ հաճոյալի ընկեր մը չունէիր իմ անձիս վրայ... Ի՞նչ պիտի ըլլայ այսուհետեւ.

—Կրնա՞ս այդպէս խօսիլ, մինչեւ իսկ թեթեւամտութեամբ մը, գոչեց Թալվան. կը մոռնա՞ս թէ մեր երիտասարդութենէն ի վեր, քու շուրջդ դարձած եմ իբրեւ համեստ արբանեակ մը. Լոյսս և զրեթէ կեանքս քենէ կ'ընդունէի... Ի՞նչ պիտի ըլլայի, եթէ բարեկամութիւնդ պակսէր ինծ. Անոնցմէ յիմարապաշտ մը, յիմարութեան հիւրընկալ մը, խենթերուն մնունդ ու բնակարան առուող մը Մինչեւ ազդեցութեամբդ տեսակ մը տաղանդաւոր մարդ ըրիր զիս. Քու փառքդ փոխ պալիր ինծ համար ալ մը ստեղծելու համար. քու ճառագայթներովդ չինեցիր ինծ լուսապսակ մը, մանկան խաղալիկ մը տալու պէս. կը կարծե՞ս որ երբեք սխալած ըլլամ այդ մասին... Ո՛հ, վաղեմի բարեկամս, եթէ սիրով չփարէի քեզ, ապերախտ մը կ'ըլլայի. Բայց քաջ գիտեմ երախտագիտութենէս աւելի, խորին սէր մը ունիմ քեզ համար... Ընտանիք չունէի և ընտանիքի տեղ բռնեցիր ինծ... Դուն և քու կինդ իմ ճշմարիտ ծնողքս եղաք այնքան աւելի սիրուած որքան ես ընտրած էի զձեզ... Եւ վրաս կ'արգահատիս որ դեռ կ'ապրիմ քովդ... Կը վախնաս որ անշնորհ ու անհամո՞յ կ'ըլլաս ինծ, երբ—ես բոլոր սրտովս շնորհակալ կ'ըլլամ քեզ՝ զիս առանձին թողելու խորհրդածեդ հրաժարեցնելուդ համար. Օ՛հ. ես շատ մեծ անձնասէր մ'եմ... Թերեւս աւելի անխռով քաւելի, երջանիկ եղած պիտի ըլլայի մահուան ապաւինելով. Բայց անկեղծօրէն կը խոստովանիմ թէ աղօր վրայ չխորհեցայ, լոկ իմ վրաս խորհեցայ. եթէ ինէ բաժնուէիր, ի՞նչ պիտի ըլլայի ես.

Ռամօ, սիրոյ այս ջերմ շունչին առջեւ, զգաց որ իր սիրտը, զոր սառած կը կարծէր, կը զեղուր կուրծքին մէջ, և տժգունած այտերը կարմրեցան, աչքերը փայլեցան մեղմիւ. Հանգիստ բարօրութիւն մը զգաց, որ ցոյց տուաւ իրեն թէ մարդկային ամէն զգացում մեռած չէր իր սրտին մէջ. Ըսաւ մտովի. քանի որ երեւակայութեանս ձեռքը մատնուած եմ, այն ատենէն որ այսքան արագ հաղորդ կ'ըլլամ ուրիշի մը սրտայուզութեան, գետին կրնամ շարաշար տագնապել. մ՛ինչ պէտք է ուրեմն ընել սրտիս մէջ ամէն բարոյական գիւրազգայութեան մարելու համար.

Այսպէս, այն պահուն որ Թալվան կ'ուրախանար զայն նորէն ձեռք բերելուն համար, ընդհակառակն նա հնարք մը կ'որոնէր իմէ խոյս տալու համար. Բայց բնութիւնը, կամքին դէմ ապստամբ, գերի կը պահէր զայն, որ դեռ իր կարծածէն շատ աւելի կը գտնուէր իր բարեկամին հեղինակութեան տակ. Բառ մը բաւական եղաւ զայս իրեն ապացուցանելու, արժէնցնելով իր տարփանքը նոր ուժգնութեամբ ու սաստկութեամբ մը. Թալվան, իր զգացմանց ջերմութենէն մղեալ, անհոհմաբար համարձակած էր բանալ

—Օ՛ն, սոսկալի գիւտեդ ի վեր, ինչ որ կ'զգամ կ'ըմբռնեմ... Ես ալ զգացի, և շատ երկար ատենէ ի վեր, վասն զի ինչ որ դուն չէիր գիտեր, ես գիտէի...

Մէկ րոպէի մէջ, Ռամօ նորէն իր զայրացեր նախանձուն մոլեգին հոսանքէն մղեալ, յաստիկ բարկացաւ. Թալվանի խօսքն յանկարծ յիշեցուցած էր անոր զՄինդէլ եւ զԽոնչեղած և ողջ, երջանիկ, ծիծաղուն ցոյց տուած էր զանոնք անոր մտաց մէջ որոյ դէմ ապերախտ գտնուած էին. Խայտառակ զոյգը կ'անցնէր գիրկընդխառն, զուարթ, խորհրդաւոր լճերաստուերի մը մէջէ, և Ռամոյի երեւակայութիւնը կը հալածէր զանոնք իր անհաշտ ու ցաւագին հետաքրքրութեամբ. Ըսաւ իր բարեկամին.

—Ուրեմն գիտէի՞ր ոճիրը.

—Առաջին օրէն.

—Եւ կանխաւ իմաց չտուի՞ր ինծ, բան մը չըսի՞ր, բան մը չըրի՞ր պատիւս պաշտպանելու համար.

Ոտք ելած էր սպառնական, իր կորաքամակ մարմինը վեր բարձրացնելով, բռունքը սեղմելով, կարծես յանցաւորները ճզմելու համար. Բայց, անկարող բարկութեան մանչիւն մ'արձակեց. Ուրուականներն իրմէ խոյս կուտային և չէր կրնար իր թեւերուն մէջ պրկել զանոնք, իր զգացած ճնշերով խեղդելու համար պատառախանց պաղարեան.

—Խե՞ղճ ախ՛ քեզ. Ինչու համար կ'անիծես քան տարի անձ թողատարելու համար. Ուղղամիտ եւ անկեղծ եղողի՞ն դէ՞րը կատարելու համար քու քովդ. և ի՞նչ օգուտ. Զարկը դարմանելի էր. Ցանցաւորներն արդէն բաւական դժբախտ էին.

—Դժբա՞խտ.

—Այո, վասն զի երկուքն ալ ողբալի ճակատագրակիցներուն մը զոհ եղած էին. Բնաւ չէին փնտռած զիրար, ամէն ինչ ըրած էին իրարմէ խոյս տալու համար. Սակայն կը փորձէին զիրար. Եւ իրենց պարկեշտութիւնը բոլորովին կորսուած չըլլալով, կը ճգնէին իրարմէ հեռու ըլլալ իրենց իրական զգացումը կեղծ թշնամութեան տակ. Միայն բե՞ր անոնց նեղուած ընթացքն, հեգնոտ լեզուն...

—Կեղծաւորութի՞ւն. խարեբայ կ'ուզէին զիս.

—Ոչ. անկեղծ էին. Վասն զի երկուքն ալ խոստովանեցուցած եմ. Պահ մ'առաջ կը մեղադրէիր զիս թէ բան մը չէի ըրած պատիւդ պաշտպանելու համար. Լաւ ուրեմն, քիչ մնաց որ յանէդ կորուսանէի կեանքս խիստ ու համառ միջամտութեամբս. Սպառնացայ իրեն պատմել զՄինդէլի և տուիքը զինքը հեռացնելու, եթէ անմիջապէս չմեկնէր Բարիզէ. Այսպէս որ այլ ես ոչ միայն և ոչ միւսին խնայելու պէտք կայ, կրնամ բացարձակ ճշմարտութիւնն յայտնել քեզ. Եւ կ'երդնում քեզ թէ անոնք յուսահատ էին.

—Այո՛, որովհետեւ իրարմէ բաժնուած էին.

—Ո՛չ, վասն զի Բոնջիա իմն հրամայեց Մինդէլի որ մեկնի. Անոնք աւելի վտանգը էին իրենց յանցանքին համար, քան թէ ամօթահար իրենց զաւաճանութեան համար, քան երջանիկ իրենց սիրոյն համար. Խղճի խայթը կը թունաւորէր անոնց բոլոր ուրախութիւնները. Եւ թշնամանքէն ի վեր անդնող բոլոր ժամերէն ոչ մէն զերծ եղաւ այս խղճի տառապանքներէն, որք քեզ վրիժառութիւնդ էին. Վերջապէս, կրնաս Մինդէլի ճշմարիտ զգացմանց ինչ ըլլալը հասկնալ, եթէ յիշես որ մեռնելու պահուն շուտով նորէն տեսնել իր մեղսակիցը.

Թարգմանեց Բ. Մ. ՊՕՂԱՃԵԱՆ (Շար.)